

## ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻՐԱՍԵԱԿԻ ՍԵՄԻՆ ԹՈՒՐՔԻԱ ՊԻՏԻ ՓՈՐՁԷ ԿԱՆԽԱՐԳԻԼԵԼ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Պոլսոյ մէջ լոյս տեսնող հայկական «Մարմարա» օրաթերթը հիմնուելով «Հապեր Թիւրք» լրատու գործակալութեան տարածած լուրերուն վրայ կը տեղեկացնէ, որ Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը արտասահմանի իր բոլոր ղեկավարներուն գաղտնի գիր ուղարկելով, գանտնք հրաւիրած է հայկական Սփիւռքի կողմէ Ցեղասպանութեան հարիւրամեակին առթիւ նախատեսուած միջոցառումներուն դէմ այժմէն իսկ կանխարգելիչ միջոցներու դիմելու: Նախարարութիւնը ղեկավարատուններուն գրած է. «Ուշադիր եղէք, սփիւռքահայ կազմակերպութիւններու հետ կապ հաստատեցէք եւ միջոցառումներուն արգելք հանդիսացէք»:

Գործակալութիւնը կը յայտնէ. «Սփիւռքը շարժման անցած է, որպէսզի 1915-ի սպանդներու հարիւրամեակին առթիւ ամբողջ աշխարհին ընդունելի դարձնէ

հայերու դէմ գործուած ցեղասպանութեան ճանաչումը: Հայերը տենդագին պատրաստութիւն կը տեսնեն եւ որոշած են գործածել հաղորդակցութեան ու լրատուական բոլոր միջոցները, որպէսզի իրականացնեն իրենց նպատակը:

«Սփիւռքահայերը այս ուղղութեամբ առաջարկ մը ներկայացուցած են նշանաւոր շարժանկարիչ Սթիւըն Սփիւլըրկին: Աշխարհի գանազան կողմերը ցուցահանդէսներ պիտի բացուին ու Ցեղասպանութեան հարիւրամեակի տեսութիւն մը քարոզութեան նիւթ պիտի դառնայ:

«Տակաւին օրակարգի կը բերուի հատուցում պահանջելու հարցը եւ 1915-էն վերջ գրաւուած հայկական ինչքերուն համար հայեր հատուցում պիտի պահանջեն Թուրքիայէն»:

«Այս բոլորին դիմաց Թուրքիա ի՞նչ պիտի ընէ», հարց կու տայ «Հապեր Թիւրք»:

## «ՈՒՒՔԻԼԻՔՍԻ» ՆՈՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՇՈՒՐՁ

Միացեալ Նահանգներու Պետական Քարտուղարութեան փաստաթուղթերը գաղտնագրծող «Ուիքիլիքս» կայքէջը վերջին օրերուն հրապարակեց Հայաստանին վերաբերող մօտ հազար փաստաթուղթեր, որոնք հետաքրքիր բացայայտումներ կը կատարեն երկրի ներքին քաղաքական կեանքին վերաբերեալ ու ալըպիտով մեծ աղմուկ յառաջացնելով քաղաքական շրջանակներու մօտ:

Բացայայտումները կ'առնչուին 2008-ի նախագահական ընտրութիւններուն, Մարտ 1-ի իրադարձութիւններուն, Սերժ Սարգսեան-Ռոբերտ Քոչարեան յարաբերութիւններուն, Հայ Ազգային Գոնկրէսէն ներս տեղի ունեցող խմորումներուն, Սահմանադրական Դատարանի որոշումներուն եւ այլ հարցերու:

Նախագահական ընտրութիւններէն մօտ երեք շաբաթ յետոյ՝ Մարտ 10-ին, Երեւանի մէջ

Միացեալ Նահանգներու գործերու հաւատարմատար ժողովք Փենինսիլթըն Ուաշինկթըն տեղեկագրած է ընտրութիւններու երկրորդ փուլ կազմակերպելու անհրաժեշտութեան մասին:

«Կասկած չկայ, որ Տէր-Պետրոսեանի՝ Փետրուար 19-ին ստացած քուէներու քանակը անհամեմատ աւելի բարձր է պաշտօնական 21.5 տոկոսէն կամ 350 հազար ձայներէն: Մեր կանխատեսումներուն համաձայն, Տէր-Պետրոսեանի ցուցանիշը իսկականին մէջ կը տատանի 30-35 տոկոսի միջոց, ինչ որ մօտաւորապէս 490-էն մինչեւ 570 հազար ձայն կը կազմէ», - կը յայտնէ Փենինսիլթըն՝ աւելցնելով. - «Վերջին երկու շաբաթուայ ընթացքին Տէր-Պետրոսեանի հանրային աջակցութեան մակարդակը միայն աճած է: Հայաստանցիներէն շատերը այժմ կը յայտնեն,

Շաբ.ը էջ 5

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԸ ԱՅՑԵԼԱԾ ԵՆ ԵՌԱԲԼՈՒՐ



Տիրունիականները Ծիծեռնակաբերդ այցելութեան ընթացքին

Սեպտեմբեր 2-ին, Արցախի Հանրապետութեան անկախութեան օրուայ առթիւ, Հնչակեան կուսակցութեան «Մարգիս Տիրունի» ուսանողական-երիտասարդական միութեան անդամները այցելած են Եռաբլուր՝ յարգանքի տուրք մատուցելու Արցախի անկախութեան եւ ազատութեան համար մղուած պայքարի ընթացքին գոհուած ազատամարտիկներու չիշատակին:

Ուսանողական միութեան անդամները Եռաբլուրի վրայ հանգչող բոլոր նահատակներու շիրիմներուն մէկական ծաղիկ դրած

Շաբ.ը էջ 4

## ՀԱՅԱՍՏԱՆ ԶԱԽՉԱԽԵՑ ԱՆՈՎԱՔԻԱՅԻՆ՝ 4-0 ԱՐԴԻԻՆՔՈՎ

Հայաստանի հաւաքականը կը շարունակէ պայքարիլ Եւրո-2012-ի ընտրական փուլէն ներս: Սեպտեմբեր 6-ին հիւրընկալուելով Եւրոպայի ուժեղագոյն խումբերէն՝ Սլովաքիայի ազգային հաւաքականին կողմէ, հայ մարզիկները արձանագրեցին փայլուն յաղթանակ մը՝ 4-0: արդիւնքով:

Առաջին խաղակէսը աւարտեցաւ հաւասար՝ 0-0: Խաղի 58-րդ վարկեանին Հայաստանի հաւաքականի գերագանց գրոհէն ետք, հաշիւը բացաւ Եւրա Մովսիսեան: 71-րդ վարկեանին Հենրի Մխիթարեան միայնակ առաջ շարժեցաւ դաշտի կեդրոնէն եւ գրաւեց Մուխայի դարպասի վարի անկիւնը՝ կրկնապատկելով հաշիւը: Ուղիղ 10 վարկեան ետք, արտակարգ յարձակում կատարելով եւ Հենրի Մխիթարեանի ոսկերչական փոխանցումէն

ետք, Գէորգ Ղազարեան գրաւեց մրցակցի դարպասը, առիթ չձգելով սլովաքներուն: Իսկ հանդիպման վերջին րոպէներուն՝ Հենրի Մխիթարեանի հարուածէն ետք

Շաբ.ը էջ 4



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ 20-ԱՄԵԱԿԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ  
 ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱՅ ՓԱՌԱՏՕՆ**

ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, 2011  
 VERDUGO PARK - ԿԼԵՆՏԷՅԼ

ARMENIAN INDEPENDENCE DAY FESTIVAL

FREE ADMISSION





ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԶԱՐԵԱՆ-

«ՀԱԿ-ԿՈՎԱԼԻՑԻԱ ԵՐԿԽՕՍՈՒԹԻՒՆՆ ԱՌԿԱԽՈՒԵՑ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՊԱՏՃԱՌՈՎ»

«Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամ Աշոտ Մանուչարեանը, որը նախկինում չափազանց էր, թէ կոնգրէս-կոալիցիա երկխոսութեան կնքահայրը Միացեալ Նահանգներ է, Սեպտեմբեր 5-ին լրագրողներին հետ հանդիպմանը կարծիք յայտնեց, թէ երկխոսութեան առկախումը եղաւ Ռուսաստանի պատճառով: «Ռուսաստանը, եւ արդարացիօրէն, սա դիտել է որպէս մի գործիք, որն իր ազդեցութիւնը կասեցնում է Հայաստանում»,- չափաբարեց նա:



«Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամ Աշոտ Մանուչարեան

յանգեցնի արտահերթ ընտրութիւններ: Նրա պարզաբանմամբ՝ ապստամբութիւն ասելով չպէտք է հասկանալ գէնքով իրար վրայ կրակելը, «այդ սպառնալիքները շրջանակը Հայաստանն անցել է»:

Աշոտ Մանուչարեանն ասաց, թէ երկխոսութեան առկախման իրական պատճառը ոչ թէ ՀԱԿ ակտիւիստ Տիգրան Առաքելեանի կալանաւորման փաստն է, այլ այն, որ առաջ շարժուելու բանաձեւը չէր գտնուել: «Սա (Տիգրան Առաքելեանի կալանաւորումը) առիթ չէր առկախման, չնայած դա բաւականին ցաւոտ իրավիճակ է, որը չի կարող կոնգրէսն անտեսել, բայց դա էլ չլինէր, այլ բան կը լինէր գործընթացն առկախելու համար»,- չափաբարեց Աշոտ Մանուչարեանը:

Մանուչարեանը մէկ դիտարկում էլ արեց. եթէ միասնական ուժերը առաջ չտանեն ժողովրդի ընդգծումը, ապա ժողովուրդը նրանց կ'առաջնորդի, ինչն, ըստ նրա, այնքան էլ լաւ չի լինի քաղաքական գործիչների համար: Ըստ նրա՝ աշխարհը հնարաւոր ժողովրդական ապստամբութիւնը կը

«Ղարաբաղ» կոմիտեի նախկին անդամի խօսքով՝ այսօր ապստամբութեան պատրաստ է բնակչութեան 99,9 տոկոսը, այդ թւում՝ օլիգարխները:

Մանուչարեանի խօսքով, երբ իրական ընդգրկում սկսուի, իսկ ցատկով շատ մեծ է յատկապէս մարզերում, երկրում պատկերն արագօրէն կը փոխուի: Թէ երբ կը սկսուի ցատկով, Մանուչարեանը դժուարացաւ կոնկրետ նշել՝ յայտարարելով. «Սեպտեմբերին կը լինի մեկնարկը»:

ԳԱՆՈՒՍ ՍԱՀԱԿԵԱՆ. «ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻ ԵՒ ՔՈԶԱՐԵԱՆԻ ՄԻՋԵՒ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԿԱՆ»

Սերժ Սարգսեանի եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ որեւէ հակասութիւն չի կարող լինել: Այդ մասին Սեպտեմբերի 6-ին կայացած մամուլի ասուլիսում չափաբարեց է ԱԺ ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեանը՝ մեկնաբանելով Հայաստանի վերաբերեալ Wikileaks սկանդալային կայքի հրատարակումները:



ՀՀԿ խմբակցութեան ղեկավար Գալուստ Սահակեան

դիրքորոշում է ունեցել: «Մարտի 1-ի ընթացքը պէտք է հարցնել Լեւոն Տէր-Պետրոսեանից, ով հասարակութեանը տարաւ իր հետեւից, եւ հոգը չէր, թէ ինչ կատարուէր: Մարտի 1-ի պատասխանատուութիւնը իշխանութեանն է, բայց մեղաւորներին պէտք է փնտրել ընդդիմութեան ճամբարում»,- նշեց Գալուստ Սահակեանը:

«Ես չեմ ընդունում, որ որեւէ հակասութիւն կարող է լինել Սերժ Սարգսեանի եւ Ռոբերտ Քոչարեանի միջեւ: Առաւել եւս նրանք մարդիկ են, որ պատերազմի ճանապարհ են անցել: Նման մարդիկ հակասութիւններ չեն ունենում»,- ասել է Գալուստ Սահակեանը:

ԱՄԵՆ ԵՐՐՈՐԴԸ ՊԱՏՐԱՍ Է ԶԵՌԱՆԱԼ ԵՐԿՐԻՑ

«Իմ կարծիքը» քաղաքացիական նախաձեռնութիւնը հարցում է անցկացրել, որի մասնակիցների 28 տոկոսը նշել է, որ հնարաւորութեան դէպքում կ'արտագաղթի Հայաստանից: Արտագաղթի հիմնական պատճառն ըստ հարցուածների՝ գործազրկութիւնն ու անարդարութիւնն է:

«Ձեր խնդիրներին լուծում տալու համար հնարաւորութեան դէպքում ո՞ւմ կը դիմէիք» հարցին, մասնակիցները առաջարկուող անուանացանկում նշել են նախ Գագիկ Ծառուկեանի, յետոյ արդէն պետական բարձրաստիճան պաշտօնեաների եւ հանրութեանը յայտնի մարդկանց անունները: Ցուցակում, սակայն, ընդգրկուած չի եղել Սերժ Սարգսեանի անունը:

Հարցման արդիւնքներով՝ մասնակիցների 45 տոկոսը կարծում է, որ երիտասարդութեանը կարող է միաւորուել միայն Ղարաբաղի խնդրի շուրջ:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԵԼ Է ՔՈԶԱՐԵԱՆԻ ԾՆՇՄԱՆ ՏԱԿ

Wikileaks կայքը գաղտնագրծել է Հայաստանում ԱՄՆ փոխդեսպան Ջոզէֆ Փենինգթոնի՝ 2008 թուականի Մարտի 7-ին ԱՄՆ Պետդեպ ուղարկուած նամակը, որում հաղորդուած է դեսպանատան աշխատակիցների եւ Հայաստանի Սահմանադրական դատարանի անդամ Վալերի Պողոսեանի գրոյցի մասին, որը հրատարակել է epress.am կայքը:

Փենինգթոնը նշում է, որ Վալերի Պողոսեանը Մարտի 6-ի ուշ երեկոյեան գաղտնի դիմել է ԱՄՆ դեսպանատան ներկայացուցիչներին՝ իր տանը շտապ առանձնագրոյց կազմակերպելու խնդրանքով: Խնդիրը կապուած է եղել ՀՀ նախագահի թեկնածու Լեւոն Տէր-Պետրոսեանի՝ ՄԴ ներկայացրած հայցի հետ, որում պահանջուած էր 2008 թուականի նախագահական ընտրութիւնների արդիւնքները չեղեալ համարել:

Փաստաթղթում նշուած է, որ հանդիպման ժամանակ «մոռացուեց ունեցող» Պողոսեանը գաղտնի գրոյցի մասին խնդրանքը բացատրել է նրանով, որ տեղեակ է, թէ «Ամերիկան ինչ արժէքներ է դաւանում»:

«Նա պնդում էր, որ նախագահ Ռոբերտ Քոչարեանն արդէն իսկ որոշում է կայացրել, համաձայն որի Մարտի 8-ին կայանալիք Սահմանադրական դատարանի լուծումները պէտք է աւարտուեն ԼՏՊ-ի բողոքի դեմ վճիռ կայացնելով: Պողոսեանը յայտնել է, որ Մարտի 4-ի ուշ երեկոյեան՝ ԼՏՊ-ի բողոքի լուծումները առաջին նիստի նախօրէին, անյայտ մէկը զանգահարել է իրեն եւ նախագահի աշխատակազմի ղեկավարի անունից (ներկայումս ՀՀ փոխվարչապետ Արմէն Գէորգեան... խմբ.) կանչել է նախագահական: Պողոսեանը նշում էր, որ ծիծաղել է զանգողի վրայ մերժելուց առաջ: Յաջորդ օրերին նա արհամարհել է զանգերը», - գրում է ամերիկացի դիւանագէտը:

Նա նաեւ մէջբերում է Պողոսեանի խօսքերն առ այն, որ ՄԴ-ի իր գործընկերներից նուազագոյնը երեքը նմանատիպ զանգեր են ստացել նախագահականից Մարտի 4-ին: Պողոսեանը նաեւ պատմել է դեսպանատան աշխատակիցներին, որ նախագահականից սպառնացել են աշխատանքից ազատել իր եղբօրը, եթէ ինքը չպատասխանի զանգերին:

Փենինգթոնը նշում է, որ Պողոսեանը ՄԴ-ում Լեւոն Տէր-Պետրոսեանի բողոքի լուծումներին իր բացակայութիւնը դեսպանատան պաշտօնեաներին բացատրել է վատաւոյք լինելու հանգամանքով:

«Բացակայութեան արդիւնքում նա հնարաւորութիւն չի ունենալ մասնակցել վճռի կայացման քուէարկութեանը: Բայց նա վստահեցրել է, որ անգամ եթէ առողջ լինէր, չէր ներկայանալ լուծումներին, - նշուած է փաստաթղթում:

Պողոսեանը նաեւ պատմել է ամերիկացի դիւանագէտներին, որ նախագահականից կատարուող ճնշումների հարցը բարձրացրել է իր գործընկերների շրջանում, սակայն իր բողոքները «անուշադրութեան են մատնել»:

Նա նաեւ պնդել է, որ դատարաններից մէկը՝ Կիմ Բալայեանը, համագործակցել է իշխանութիւնների հետ, քանի որ նրա որդին՝ Տիգրան Բալայեանը նշանակուել է ԱԳ նախարարութեան իստանակ (նա փոխարինել է Փետրոսարին աշխատանքից ազատուած Վլադիմիր Կարապետեանին):

Պողոսեանը նշել է, որ այս գործում իր դիրքորոշումը եւ լուծումներից բացակայութիւնը կարող են անձնական խնդիրների հանգեցնել լուծումներից յետոյ: Նա խոստովանել է, որ վախենալու հիմքեր ունի՝ նշելով, որ եթէ այդ ճնշումները չլինէին, դատարանի անդամներից

Շար.ք էջ 18

ՄԵԿ ԱՄԻՍ ԺԱՄԱՆԱԿ ՍԵՐԺ ՍԱՐԳՍԵԱՆԻՆ

«Այսօր բանակում ծառայելն աւելի վտանգաւոր է, քան պոստերում եւ դիրքերում գտնուելը»,- Սեպտեմբեր 6-ին չափաբարեց Հեւիտիկեան քաղաքացիական ասամբլիայի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը: Ըստ նրա՝ իրենց կողմից կատարուած ուսումնասիրութիւնների արդիւնքում պարզ է դարձել, որ բանակում մահացածների ընդամէնը 10 տոկոսն է գոհուած հրադադարի խախտման ռեժիմի հետեւանքով:



Մամուլի ասուլիսի մասնակիցները

«2007-2011 թթ բանակում 228 սպանուած զինուորներից միայն 32-ն են, որ զինադադարի խախտման ռեժիմի հետեւանքով են գոհուել»,- ասաց իրաւապաշտպանը: Մի շարք իրաւապաշտպան կազմակերպութիւնների ներկայացուցիչներ չափաբարեցին, որ այն, ինչ կատարուած է բանակում, մարդու իրաւունքների կոպտ խախտում է. գինձառայողների մահուան դէպքերի առիթով յարուցուած քրէական գործերը տարիներով չեն

բացայայտուած, սպանութիւնները ներկայացուած են որպէս ինքնասպանութիւն՝ առաջին հերթին պատասխանատուութիւնից խուսափելու համար:

Իրաւապաշտպանները առաջարկեցին ստեղծել առանձին մարմին, որը շատ օպերատիւ ձեւով կը զբաղուի սպանութիւնների հարցով: Նրանք նաեւ չափաբարութիւն արեցին, որում մասնաւորապէս ասուած է. «Մէկ ամսում գործուն քայլեր չձեռնարկելու պարագայում հայկական բանակում տիրող իրավիճակը համար մեղաւոր եւ հովանաւոր ենք համարում ՀՀ գլխաւոր զերագոյն հրամանատար Սերժ Սարգսեանին եւ պահանջում նրա հրաժարականը»:



# ԼՈՒՐԵՐ

## «ՀԱՐԱԿՎՈՎԿԱՍԵԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ ԳՏՆԻՈՒՄ Ե ԻՐԱՆԱ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ» ԱՄԵՐԻԿԱՑԻ ՓՈՐՁԱԳԷՏ

Ամերիկացի վերլուծաբան Էնթոնի Քորդամենը կարծում է, որ Հարավային Կովկասի տարածաշրջանը գտնուում է ԱՄՆ-ի եւ Իրանի ռազմավարական մրցակցութեան կենտրոնում:

Ինչպէս հաղորդում է ադրբեջանական «ԱՊԱ» գործակալութիւնը, վերլուծաբանն ասել է, որ Բաքուն սերտ յարաբերութիւններ ունի ԱՄՆ-ի հետ. «Ադրբեջանն ԱՄՆ-ի համար շատ կարեւոր է՝ նիւթական եւ տեխնիկական ապահովման տեսանկիւնից, իսկ Իրանը տարածաշրջանում շարունակում է կարեւոր ուժ մնալ, եւ Բաքուն չի կարող արհամարհել Իրանին», - ասել է վերլուծաբանը:

«Իրանը յատուկ տնտեսական դեր է խաղում Հայաստանում եւ փորձում է մեծացնել իր ազդեցութիւնը: Հայաստանի եւ Իրանի միջեւ յարաբերութիւնները հիմնականում հիմնուած են առեւտրի

վրայ: Եւ քանի որ Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ սահմանը փակ է, ուստի այս յարաբերութիւնները Հայաստանի համար շատ կարեւոր են», - նշել է փորձագէտը:

Անդրադառնալով ԱՄՆ-Հայաստան-Ադրբեջան յարաբերութիւններին՝ վերլուծաբանն ասել է, որ ԱՄՆ փորձում է երկու կողմերի հետ լաւ յարաբերութիւններ հաստատել եւ «առանց բացայայտ առճակատման ճնշում գործադրել»:

Անդրադառնալով Վրաստանին՝ Քորդամենն ասել է. «Վրաստանի եւ Իրանի միջեւ առեւտրային յարաբերութիւնները կարելի է ասել, որ «թրթուած են»: Վրաստանի արտաքին քաղաքականութեան հիմնական հարցը Ռուսաստանի միջամտութիւնն այդ երկրի ներքին գործերին կասեցնելն է, իսկ Վաշինգտոնն այդ հարցում «փոխյատուցող դեր է» խաղում», - նշել է փորձագէտը:

## ԻՍՐԱԵԼԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԳԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑԸ ԿՐԿԻՆ ԹՈՒՐԲԱԿԱՆ ՄԱՍՈՒԼՈՒՄ Է

Թուրքիայի կողմից Իսրայէլի նկատմամբ կիրառուող վերաբերմունքը պատճառ է դարձել, որ Իսրայէլի խորհրդարանում Հայոց ցեղասպանութեան ճանաչման ռզմութեամբ քայլեր արուեն: Այս մասին գրում է թուրքական Haberturk-ը:

Թուրքական պարբերականը չի շատակում է Իսրայէլցի պատգամաւոր Արլէլ Էլզադի խօսքերը, ով նշել էր, թէ Թուրքիան Իսրայէլցի դիւանագէտներին արտաքսելու համար պատասխան է տալու:

Նշում է նաեւ, որ Արլէլ Էլզադն ասել է, թէ խորհրդարանական աշխատանքներն սկսելուն պէս օրակարգ է ներառուելու Հայոց ցեղասպանութեան ճանաչման օրինագիծ: Այս կարգի տեղեկութիւններ են հրապարակել թուրքական գրե-

թէ բոլոր լրատուամիջոցները՝ պնդելով, որ հայկական Սփիւռքը չուսով է, թէ Իսրայէլը որպէս պատասխան կ'ընդունի Հայոց ցեղասպանութիւնը:

Նշենք, որ «Մաւի Մարմար»-ի հետ կապուած ՄԱԿ-ի գեկոյցը ամերիկեան մամուլի միջոցով յայտնի դառնալուց յետոյ Դաւութօղլուն խիստ է արձագանքել՝ յայտարարելով, որ Իսրայէլի հետ դիւանագիտական յարաբերութիւններն իջեցուած են 2-րդ կարգի քարտուղարի մակարդակի եւ մինչեւ Սեպտեմբերի 7-ը Իսրայէլում գտնուող դիւանագիտական անձնակազմը կը վերադառնայ Թուրքիա:

Թուրք նախարարը շեշտել է, թէ Իսրայէլի հետ կնքուած միլիոնաւոր դոլարների ռազմական ծրագրերն էլ առկախուելու են:

## ՀՆՉԱԿԵԱՆ ԵՐԻՏՐԱՍՏՐԱՆԵՐԸ ԱՅՑԵԼԱԾ ԵՆ ԵՌԱԲԼՈՒՐ

Շարունակուած էջ 1-էն  
են՝ ի նշան անմահ հերոսներու սիրանքներու հանդէպ ունեցած յարգանքին, անկախ անոնց կոչումէն, գրաւած դիրքերէն եւ կամ կուսակցական պատկանելիութիւնէն: «Այս հերոսները, որոնք յաւերժ գնով ննջում են համայն հայութեան սրբատեղի Եռաբլուրում, մեզ պատգամում են մի բան՝ անհրաժեշտութեան պարագայում կեանքի գնով պաշտպանել մեր Ազատ, Անկախ եւ նուիրական Արցախը: Խրամատներում, ուումբերի պայթիւնները

րի ներքոյ իրենց մանկութիւնն անցկացրած արցախցի մեր բոլորներն ու եղբայրները պէտք է վատահ լինեն, որ Մայր Հայրենիքում հասունացել է մի սերունդ, որ երբեք չի հանդուրժի օտար լծի առկայութիւնը արցախեան հողում», - դիմելով ուսանողներուն, ըսած է «Մարգիտ Տիրուհի» միութեան ատենապետ Վարդգղատ Եղիազարեան: Այնուհետեւ Տիրուհիականները այցելած են Միծեռնակաբերդ՝ իրենց յարգանքը մատուցելու Հայոց Ցեղասպանութեան գոհերու չի շատակին:

## ՀԱՅԱՍՏԱՆ ԶԱՆՁԱԽԵՑ ՍԼՈՎԱՔԻԱՆ

Շարունակուած էջ 1-էն  
գնդակը դպաւ Մուխայի դարպասի հորիզոնական ձողին, ետ վերադարձաւ ու վրայ հասնող Արթուր Սարկիսով գլուխով նշանակեց Հայաստանի ազգային հաւաքակաւնի կազմէն ներս իր առաջին կողը: Զուտ մի մրցաշարքի աւարտէն երկու խաղ առաջ, Հայաստան 14 կէտով հաւասարեցաւ Սլովաքիայի հաւաքականին եւ ընդամէնը 3 կէ-

տով կը գիշի իմբակի առաջատար Ռուսաստանին, որ 0:0 արդիւնքով աւարտեց հանդիպումը Իռլանտայի հետ եւ ունի 17 միաւոր: Իռլանտան 15 կէտով երկրորդ տեղն է: Հայաստան երրորդն է: Խմբակին մէջ առաջին տեղ գրաւած խումբը կը նուաճէ եզրափակիչ մրցաշարի անձագիրը: Երկրորդ տեղ գրաւած հաւաքակաւնը կը մասնակցի գտումի երկրորդ հանգրուանին:

## ԺԻՐԱՅՐ ԼԻՊԱՐԻՏԵԱՆ-«ԱԴՐԲԵՋԱՆԸ ԿԱՐՈՂ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ ՊԱՏԵՐԱԶՍ ՍԿԱՍԵԼ ԱՌԱՆՑ ՍԵԾ ՏԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԵԱՆ»

Զի բացառում, որ Ադրբեջանը Հայաստանի դէմ պատերազմ սկսի առանց մեծ տէրութիւնների համաձայնութեան: Այս մասին «Թիւրան» գործակալութեան հետ հարցազրոյցում ասել է Հայաստանի առաջին նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեանի նախկին գլխաւոր խորհրդական Ժիրայր Լիպարիտեանը:

«Որպէսզի գոյութիւն ունենան մեծ տէրութիւնները, պէտք է լինեն նաեւ այնպիսի պետութիւններ, որոնք այդպիսին չեն: Լինում է նաեւ այնպէս, որ որոշ պետութիւններ հաշուի են նստում ոչ մեծ եւ նոյնիսկ փոքր պետութիւնների հետ, կախման մէջ են գտնուում նրանցից: Պատմութեան ընթացքում շատ բան է տեղի ունեցել հենց այդպիսի ոչ մեծ պետութիւնների պատճառով», - ասել է Լիպարիտեանը՝ նշելով, որ մեծ տէրութիւն չհամարուող Ադրբեջանը հնարաւոր է՝ բանակցութիւններ է վարում ԱՄՆ-ի կամ Ռուսաստանի հետ Հայաստանի դէմ պատերազմ սկսելու համար:

«Հաշուի առնելով փակուղային իրավիճակը՝ Ադրբեջանը կարող է որոշում կայացնել, որ պատերազմ սկսելուց բացի այլընտրանք չունի», - ասել է Լիպարիտեանը՝ նշելով, որ մեծ տէրութիւնները դէմ չեն լինի նրա որոշմանը: Անդրադառնալով հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման գործընթացին՝ Լիպարիտեանն ընդգծել է, որ կողմերն Արձանագրութիւններից սպասում էին աւելին, քան այդ փաստաթղթերը կարող էին տալ նրանց: «Յարաբերութիւնների կար-



Ժիրայր Լիպարիտեան

գաւորման եւ սահմանների բացման հետ մեկտեղ Թուրքիան ցանկանում էր լուծել Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման հարցը, իսկ Հայաստանը փորձում էր վերացնել երկկողմ յարաբերութիւնները դարաբաղեան հակամարտութեան կարգաւորման հետ շարկակելու ինդիքը: Մեծ հաշուով, Երեւանն ու Անկարան անկեղծ էին իրենց նպատակներում», - ասել է Լիպարիտեանը՝ աւելացնելով, որ ստեղծուած իրավիճակում հիմնական մեղաւորը Թուրքիան է, որը մերժեց Հայաստանի՝ յարաբերութիւններն առանց նախապայմանի վերականգնելու առաջարկութիւնը:

Նշելով, որ հայ-թուրքական յարաբերութիւնների կարգաւորման ձախողման մէջ զգալի դերակատարութիւն է ունեցել նաեւ Ադրբեջանը, Ժիրայր Լիպարիտեանն ասել է. «Արձանագրութիւնների ձախողումը զգալի չափով ետ մղեց հայ-թուրքական հաշտեցման գործընթացը»:

## «ՀԱԶԱՐԱՍԵԱԿԻ ՄԱՐՏԱՅՐԱԿԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄՆ ԱՄՓՈՓՈՒՄ Է ԾՐԱԳՐԵՐԸ

Սեպտեմբերի վերջին աւարտուում է ԱՄՆ-ի «Հազարամեակի մարտահրաւէր» կորպորացիայի (ՀՄԿ) հայաստանեան ծրագիրը, ինչի կապակցութեամբ «Հազարամեակի մարտահրաւէր հիմնադրամ-Հայաստան»-ի գործադիր տնօրէն Արա Յովսէփեանը Սեպտեմբեր 5-ին լրագրողներին ներկայացրեց հիմնադրամի կատարած աշխատանքները:

Յիշեցնենք, որ 2006 թուականին «Հազարամեակի մարտահրաւէր» կորպորացիան ծրագրել էր Հայաստանին յատկացնել մօտ 235 միլիոն դոլարի գումար՝ նախատեսուած ուղղման համակարգերի եւ գիւղական ճանապարհների շինարարութեան համար: 2009-ին, սակայն, կորպորացիայի տնօրէնների խորհուրդը որոշեց դադարեցնել մօտ 60 միլիոն դոլար արժողութեամբ ճանապարհաշինութեան ծրագրի ֆինանսաւորումը՝ պայմանաւորուած մի շարք քաղաքական ցուցանիշների գծով Հայաստանի կատարողականի վատթարացմամբ: Շարունակուեց եւ աւարտին հասցուեց միայն ուղղման համակարգերի կառուցման ծրագիրը:

«Օգոստոսի 31-ի դրութեամբ մեր ծրագրով ընդամէնը ծախսուել է մօտ 146 միլիոն դոլար: Մինչեւ ծրագրի աւարտը նախատեսուած է եւս մօտ 30 միլիոն

դոլար ծախսել», - տեղեկացրեց Արա Յովսէփեանը:

Նա նշեց, որ փաստացի կատարուել է ծրագրով նախատեսուած աշխատանքների 90 տոկոսից աւելին, այդ թւում՝ վերականգնուել են վեց մայր ջրանցքներ եւ 5 ինքնահոս համակարգեր, վերականգնուել է Արարատեան դաշտավայրի դրենաժային համակարգը, ինչպէս նաեւ 17 պողոտայականներ:

2008 թուականի Մարտին յետընտրական իրադարձութիւններից անմիջապէս յետոյ ՀՄԿ-ի գլխաւոր տնօրէն Զոն Դանիլովիչը նամակ էր յղել Հայաստանի այն ժամանակուայ նախագահ Ռոբերտ Քոչարեանին՝ նախագուշացնելով, որ մարտեան իրադարձութիւնները կարող են իրենց ազդեցութիւնն ունենալ ՀՄԿ-ի հայաստանեան ծրագրերի վրայ: Քոչարեանը պատասխան նամակ էր գրել, որի բովանդակութիւնը սակայն այդպէս էլ չհրապարակուեց, չնայած լրագրողների «Ասպարէզ» ակումբի նախագահ Լեւոն Բարսեղեանը Հայաստանի դատական բոլոր ատեաններում ապարդիւն կերպով բողոքարկեց այդ նամակը ՀՀրապարակելու իրողութիւնը:

Ներկայումս Բարսեղեանի հայցը ընդունուած կարգի համաձայն տեղափոխուել է Ստրասբուրգի Մարդու իրաւունքների դատարան:

# ԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՆՔ, ԻՍԿ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ...

**ՎԱՀՐԱՄ ԱՂԱՋԱՆՆԱՆ**  
«Երբորդ Ուժ» թերթի գլխավոր խմբագիր

Սեպտեմբերն առանձնատուկ ամիս է հայ ժողովրդի համար: Սեպտեմբերին մենք երկու անգամ ենք նշում մեր հայրենիքի Անկախութեան օրը. 2-ին՝ 192-ում, 21-ին՝ ՀՀ-ում: Բացի այդ, ասում են, որ մենք նշում ենք այդ լուսաւոր տունը նաեւ Մայիսի 28-ին, որը նույնպէս Անկախութեան իւրատեսակ օր է: Կարծիք կայ, որ Անկախութեան օր կարելի է համարել նաեւ Օգոստոսի 11-ը, երբ Հայկ նահապետը տապալեց Բաբելոնի թագաւոր Բեղին: Մի խօսքով, շատ ունենք այսպիսի անկախութիւններ, եւ դա լաւ է: Ինչքան յաճախ տօնենք նման տօներ, այնքան, երեւի, աւելի անկախ կը դառնանք: Ընդհանրապէս, կարելի է այս տօնը նշել իւրաքանչիւր եռամսեակը մէկ եւ անգամ ամէն ամիս: Իսկ ինչո՞ւ ոչ: Մենք այնքան երկար ժամանակ անկախութիւն չենք ունեցել, որ դրա աւելցուկից ոչ ոք չի տուժի. ապրիւր քեզ համար ու մի կախուրի, ներեցէք, կախում մի ունեցիր:

Այս տեսանկիւնից, այսինքն՝ անկախ զգացողութիւնների հաճելի յաճախութեան իմաստով, Հայաստանն աշխարհի, թերեւս, ամենանկախ երկիրն է: Վշտացնում են միայն մանրուքները, մեր ու ձեր բազմօրեայ Անկախութեան փոքր-ինչ տրեղցնող մանրուքները: Իսկ մանրուքը, ինչպէս յասնի է, լուրջ բան է: Ինչպէս կասեր ծերուկ Ուիլլերը, մանրուքները ամէնից շատ են տագնապեցնում մեզ. աւելի հեշտ է փղից խոյս տալ, քան «աներես» ճանճից:

Առաջին մանրուքն, անշուշտ, չափից դուրս «անկախ» դատարաններն են: Անկախ Հայաստանում եւ 192-ում անկախ են բոլորը, այդ թւում՝ դատաւորներն ու դատարանները: Նրանք կարող են դատել ձեզ, անկախ նրանից մեղաւոր էք, թէ՞ անմեղ: Հասկանո՞ւմ էք, այս դատարանները կախուած չեն ոչնչից. ոչ երկրի Սահմանադրութիւնից, ոչ նրա Քրէական Օրէնսգրքից, ոչ ընդունուած միջազգային նորմերից, ոչ առաւել եւս Աստուածաշնչից: Դատում են՝ անիրաւորէն կոտորելով հազարաւոր մարդկային ճակատագրեր, եւ «ախ» էլ չեն անում: Դատում են դաժանօրէն, անարդար, անմարդկային կերպով, եթէ անգամ դուք երիցս իրաւացի էք, եւ դառնում են տամենակ հազարաւոր մարդկանց արտագաղթի լուրջ պատճառներից մէկը: Դատում են ու չեն դատում: Նրանց «աշխատանքից» դժգոհ է արդէն ՀՀ նախագահը:

Երկրորդ մանրուքը անկախօրէն կիսախեղդուած ՁԼՄ-ներն են: Ոչ, մեզ ճիշտ հասկացէք. «անկախ» մամուլ մենք ունենք, սակայն այն գործում է, ընդհանուր առմամբ, համաձայն պետական որոշ գերատեսչութիւնների հաստիքային ցուցակի եւ ունի (ինչպէ՞ս աւելի մեղմ ասենք) տեսողութեան եւ լսողութեան հետ կապուած որոշ խնդիրներ. որպէս կանոն չի տեսնում եւ չի լսում այն, ինչ տեսնում եւ լսում է ողջ հասարակութիւնը: Սակայն հոգ չէ, փոխարէնն այն անկախ է: Որոշ միտնբուժութեան սաղարիչներ պնդում են, որ ազատ խօսքը Հայաստանում արգելուած է: Սա, իհարկէ, ստոր գրպարտութիւն է, մեր աշխուրջ

թշնամիների բանարկութիւնը: Հայաստանում ամէն ինչի մասին կարելի է գրել ու խօսել, իսկ ահա մտածել պէտք է շա-ա-ատ զգուշօրէն: Քանի որ խօսքը մեզ մօտ ազատել են, իսկ, այ, միտքը... Նրա մասին, ցաւօք, մոռացել են:

Երրորդ մանրուքն իշխանութեան օրէնսդիր եւ գործադիր ճիւղերի անկախ անբաժանութիւնն է: Սակայն եւ այս հարցն է մեզ մօտ գրեթէ լուծուած, բացառութեամբ դատարկ մի բանի, ոչ հակա մի մանրուքի. այս ճիւղերը նոյն արմատն ունեն: Մէկն առանց միւսի չի աճում, հասկանո՞ւմ էք: Չի կարող մի ճիւղն ինքնուրոյն ծաղկել, քանի որ միւսն այս դէպքում կարող է անսպասելիօրէն թռչնել: Սա հին հայկական «բուսաբանութիւն» է. երբ մեզ մօտ մէկը ծաղկում է, միւսը միանգամից թռչնում է: Դրա համար էլ գոյութիւն ունի զգօն Այգեպանը, որը ժամանակին կտրում է իւրաքանչիւր անկախ ճիւղի չափազանց ծաղկած ծաղիկները: Սրանից յետոյ այս ծառի հարիւր հազարաւոր տերեւներ, իհարկէ, թափուած են, սակայն մի քանի ծաղիկներ, այդուհանդերձ, կենդանի են մնում, եւ դա չի կարող չուրախացնել մեր հայրենասէր հոգիները: Թող որ քիչ ճիւղեր են ծաղկում, սակայն ինչ-որ մէկը ծաղկում է, չէ՞:

Չորրորդ մանրուքը, որը խանգարում է մեզ անկախ ապրել, իհարկէ, Ատրպէյճանն է: Չար, զգուշի, վնասարար, ամբողջովին տոտալիտար եւ տարածքային չբաւարարուած: Մի տեղ կը կրակի, մի տեղ «կ'աղտոտի»: Հենց նա է մեր բոլոր դժբախտութիւնների պատճառը: Պաքուն, իհարկէ, շատ բա-

նում է մեղաւոր, սակայն մի՞թէ ամէն ինչում: Ասֆալտն անհա՞րթ է: Մեղաւորը Ատրպէյճանն է: Աշխատավարձե՞րն են ցածր: Ատրպէյճանն է մեղաւոր: Ծորակից ջուր չի գալի՞ս: Մեղաւորը դարձեալ Ատրպէյճանն է: Եթէ Ատրպէյճանը չլինէր, պէտք կը լինէր այն յօրինել: Քանի որ իւրաքանչիւր անկախ իշխանութիւն անպայման պէտք է ունենայ իր սեփական արտաքին «ատրպէյճանը». շատ հարցերում առանց դրա անկախ իշխանութիւնը ուղղակի չի կարող ծաղկել:

Հինգերորդ մանրուքն երկու շատ թանկ ու հարազատ հասկացութիւնների չհամընկնելն է: Դրանք «հայրենիք» եւ «պետութիւն» հասկացութիւններն են: Խնդիրն այն է, որ մեր քաղաքացիները մի մասն ապրում է հայրենիքում, իսկ միւսը՝ պետութեան մէջ: Առաջին մասը վրդովուած է, որ պետական պիւտճէն ոչ մի կերպ չի համընկնում հայրենիքի բնակիչների կարիքների հետ: Իսկ մի 50 ընտանիքից կազմուած երկրորդ մասն ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, թէ ինչից է սկսում այդ, ը-ը... ո՞նց էր, է, էդ անտէրը, հա..., հայրենիքը ու, ախպեր Չան, ի՞նչ է ընդհանրապէս պէտք էդ հայրենիքում բնակուող 2-3 միլիոն չքաւորներին:

Վեցերորդ պատճառը կամքի բացակայութիւնն է: Ոչ այն կամքի, որի միջոցով մենք դեռ ողջ ենք՝ չնայած անկախութեան բոլոր «մանրութիւններին»: Այլ ազատութեան հասնելու կամքի, առանց որի ապրել եւ գործակալ պարզապէս ահար է: Քանի որ երկրի անկախութիւնն առանց քաղաքացիների ազատութեան թերաբժէք է: Քանի որ անկախութիւն մենք արդէն ունենք, իսկ ազատութիւն, աւաղ, չկայ ու չկայ...

## «ՈՒԻՔԻԼԻՔՍԻ» ՆՈՐ ԲԱՅԱՅԱՅՏՈՒՄՆԵՐԸ

Շարունակուած էջ 1-էն

որ խնդիրը ոչ թէ Տէր-Պետրոսեանի անձն է, այլ կառավարութեան պահուածքը»:

Փաստաթուղթերու մէկ մասը կը վերաբերի Մարտի 1-ին նախորդած իրադարձութիւններուն: Մասնաւորաբար, ամերիկացի դիւանագէտներու եւ հայաստանի իշխանութեան ներկայացուցիչներու միջեւ այդ օրերուն տեղի ունեցող պատիւ շփոթումներուն: 2008-ի Փետրուար 28-ին Ռոբերդ Քոչարեանի եւ Ժողով ֆենիկսի միջեւ տեղի ունեցած զրոյցի տեղեկագիրը դեմաստիկութեան աշխատակիցները վերնագրած են հետեւեալ կերպ. - «Քոչարեանի աշխարհը, որտեղ կառավարութիւնը անսխալական է»:

Ամերիկացի դիւանագէտները կը տեղեկացնեն, որ հանդիպումին ներկայ էր նաեւ այդ ժամանակուայ արտաքին գործոց նախարար Վարդան Օսկանեանը:

«Անոր պահուածքն ինքնին շատ խօսուն էր: Ամբողջ զրոյցի ընթացքին Օսկանեան հայեացքը մէկ կ'ուղղէր առաստաղին, մէկ առաջ կու գար եւ կը սկսէր ուսումնասիրել իր կօշիկները», - կը նկարագրէ ֆենիկսիցը:

«Ուիլքիլիքսի» վրայ տեղադրուած մէկ այլ դիւանագիտական փաստաթուղթ կը բացայայտէ այն մեխանիզմը, որով կայացուած է Սահմանադրական Դատարանի վճիռը 2008-ի Մարտի 8-ին՝ նախագահական ընտրութիւններու արդիւնքներու վիճարկման հետ կապուած:

«Մարտի 6-ի երեկոյեան մեզ հետ կապ հաստատեց Սահմանադրական Դատարանի անդամ Վալերի Պողոսեանը՝ զաղտնի հանդիպում խնդրելով», - գրած են ամերիկացի դիւանագէտները: Նոյն օրը կայացած հանդիպման ընթացքին Պողոսեան պնդած է, որ Քոչարեան արդէն իսկ կանխորոշած է, թէ ինչ վճիռ պիտի կայացնէ Մարտ 8-ին Սահմանադրական դատարանը: Պողոսեան յայտնած է, որ Մարտ 4-ին իրեն զանգահարած են նախագահի աշխատակազմի ղեկավարի անունով եւ հրաւիրած նախագահի նստավայր: Պողոսեան, սակայն, մերժած է այդ հրաւերը: (Այս փաստաթուղթը տեսնել առանձին):

Ամերիկացի դիւանագէտներու գնահատմամբ, Հայ Ազգային Գոնկրէսը 2009-ի վերջերուն-2010-ի սկզբին դիմագրաւած է շարք մը լուրջ խնդիրներ. - «Գոնկրէսէն ներս մեր աղբիւրները խնդիրներու չորս հիմնական խումբ կը մատնանշեն՝ ներքին ժողովրդավարութեան պակասը, նախագահ Սարգսեանի արտաքին քաղաքականութեան հանդէպ որդեգրուած հաշտուողական մօտեցումը, հիմնական նպատակներուն հասնելու համար անհրաժեշտ ռազմավարութեան բացակայութիւնն ու ֆինանսական միջոցներու պակասը»:

Նոյն աղբիւրները մատնանշելով, ամերիկացի դիւանագէտները կը պնդեն, թէ ՀԱԿ-ին մաս կազմող 17 կուսակցութիւններէն շատերը յայտնուած են յուսախաբուած վիճակի մէջ:

«Ազգայնականօրէն տրամադրուած ՀԱԿ-ի անդամներու մէկ մասը կտրականապէս համաձայն չէ այն մօտեցումներուն, որ արտաքին քաղաքականութեան ասպարէզէն ներս կը ցուցաբերէ Տէր-Պետրոսեան: Խօսքը, մասնաւորապէս, հայ-թրքական հաշտեցման եւ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգաւորման մասին է: Ընդդիմադիր դաշինքի ազգայնական անդամները դժգոհ են այն աջակցութենէն, որ այս խնդիրներուն գծով նախագահ Սարգսեանին կը ցուցաբերէ Տէր-Պետրոսեան», - կը գրեն ամերիկացի դիւանագէտները, որպէս թիւ մէկ դժգոհ ուժ նշելով Հնչակեան կուսակցութեան անդամները:

Այլ փաստաթուղթի մը համաձայն, 2009 թուականի Փետրուարին, իշխող Հանրապետական կուսակցութեան ներկայացուցիչ, ներկայիս Ազգային ժողովի փոխխօսնակ Սամուէլ Նիկոնեան ԱՄՆ-ի դեսպանատան ներկայացուցիչներուն հետ հանդիպման ընթացքին բացայայտ խօսած է Սերժ Սարգսեան - Ռոբերդ Քոչարեան հակա-

ստութեան մասին:

Նիկոնեանի խօսքերով, նախագահ Սարգսեան անձամբ հանդիպած է Ռոբերդ Քոչարեանին, երբ Ազգային ժողովի քաղաքական ղեկավարները՝ «Բարգաւաճ Հայաստան»-ը եւ Դաշնակցութիւնը վճռականօրէն քննադատած ու հրապարակաւ դէմ արտայայտուած են կառավարութեան առաջարկած օրէնսդրական նախաձեռնութեան: Ըստ Նիկոնեանի, Սերժ Սարգսեան Ռոբերդ Քոչարեանին ըսած է. - «Դուք կարող էք վարչապետ լինել, սակայն այդ դէպքում պէտք է նաեւ Ձեզ հետ նախագահ բերէք»:

«Տպաւորութիւնը այնպիսին է, կարծես Սերժ Սարգսեան պիտի չհանդուրժէ Քոչարեանի շարունակական քաղաքական խաղերուն՝ Սարգսեանի կառավարութեան դէմ, եւ եթէ այս հեռակայ քաղաքական պատերազմները շարունակուին, այդ կրնայ վերածուիլ լայնածաւալ առճակատման», - Ուաշինկթըն ուղարկուած հեռագրին մէջ գրած է Հայաստանի մէջ ԱՄՆ-ի գործերու հաւատարմատար Ժողով ֆենիկսիցը:

833 W. Glendale Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065

**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor

**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծածախառնականութիւնը եւ մտնուկներու ճարտարաբանութիւնը բաժնուած:  
Գլխացաւ, վրի, մէջքի, յօդային եւ սկզանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի հետեւեացող պատահած վնասուածքներու բաժնուած:

Չեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



# ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ԱՐՏԱԳԱՂԹ ԵՒ «ԱՐԻ ՏՈՒՆ»

ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

Խորագրի երկու եզրերը սերտորեն առնչուած են մեր գոյապայքարի եւ ազգապահպանման առաքելութեանց հետ:

Արտագաղթը մեր բազմադարեան պատմութեան մէջ միշտ ալ հիւճած է մեզ, տկարացնելով եւ խոցելի դարձնելով մեզ, յաշտ մեզ շրջապատող ուժերուն:

«Արի Տուն» ծրագիրը, որ վերանունումն է գէթ հարիւրամեակէ մը ի վեր հնչող «Դէպի Երկիր» ծանօթ լոգունգին, շատ գեղեցիկ գաղափար մըն է: Այսուհանդերձ, ան դատապարտուած է ենթարկուելու նոյն ճակատագրին, եթէ չ'օտուկի զայն իրականութիւն դարձնելու յստակ մեթոտաբանութեամբ մը, եւ չհամակարգուի յարակից ներգաղթեցիկ ոլորտներու հետ: Այլ խօսքով, որպէս զի սփիւռքահայ ռեւէ անհատ լրջօրէն մտածէ եւ ծրագրաւորէ հիմնական բնակութիւն հաստատել Հայաստանի մէջ, պէտք է ստեղծել վստահութիւն ներշնչող տեղական պայմանները: Երբ հայրենի պետական այրերը կը թերանան երկրէն ներս արդար համակարգի մը ստեղծման իրենց պարտաւորութեան մէջ, ուրեմն ինչո՞ւ զարմանալ անհանցող արտագաղթի թիւերով եւ կամ ներգաղթի չգոյութեամբ:

Հետեւաբար, որպէս զի կանցուի արտագաղթը եւ քաջալերուի ներգաղթը, հայրենաբնակ մէն մի անհատ առաջին հերթին ինքզինք ապահով պէտք է զգայ, որ իր սահմանադրական տարրական իրաւունքները օրէնքով պաշտպանուած են եւ ինք ստիպուած պէտք չէ ըլլայ դիմելու Եւրոպատարան, Հայաստանի դատարաններուն կողմէ իրմէ իրաւագրկուածը վերականգնելու համար:

Մենք վերեւի մտորումները ունեցանք, «Մասիս» շաբաթաթերթի Օգոստոս 20 եւ 27, 2011 յաջորդական թիւերուն մէջ կարդալով Յարութ Տէր Դաւիթեանի «Աւատապետական Հայաստանի Արհաւիրքը» յօդուածը եւ Ծիրակի թեմի առաջնորդ Միքայէլ Եպսկ. Աջապահեանի «Պէտք չի ժողովրդին վերաբերուել որպէս հպատակների, որոնց պէտք է խուզել, կ'թել» հարցազրոյցը: Երկու յօդուածագիրներն ալ կ'անդրադառնային այն կործանարար հետեւանքներուն, որոնց պիտի լանգինք, եթէ երկրէն ներս

շարունակուի տիրող աւատապետական դրութիւնը եւ ժողովրդի հանդէպ որդեգրուած սխալ վերաբերմունքը: Մեր յիշողութիւնը մեզ տարաւ 6-7 տարիներ ետ, երբ տեղույս Ս.Գ. Հնչակեան կուսակցութեան վարիչ Մարմնի հետ հանդիպում մը ունեցանք Լոս Անճելըս այցելութեան եկած Հայաստանի Խորհրդարանական պատուիրակութեան մը հետ: Այդ հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստան-Սփիւռք փոխյարաբերութիւնները եւ մեր արծարծած գլխաւոր մտահոգութիւններէն մին արտագաղթի ներկայացուցած վտանգն ու անոր աղէտալի հետեւանքներն էին: Պատուիրակութեան անդամներէն, ՀՅԴ ներկայացուցիչ Դաւիթ Լոբեան կտրականապէս մերժեց եւ ըսաւ թէ այդպիսի վտանգ գոյութիւն չունի, որովհետեւ պետութիւնը իր կարելին կ'ընէ առաջը առնելու եւ կանխելու համար զանհկա: Այդ հանդիպումէն ի վեր անցած տարիները եկան փաստելու թէ որքանով տեղին էր մեր մտահոգութիւնը: Դժբախտաբար տակաւին կը շարունակուի նոյն անփոյթ մոտեցումը եւ ոչ մէկ դրական աշխատանք կը տարուի երկրէն ներս զարկ տալու սոցիալական, տնտեսական եւ մարդկային իրաւանց զարգացումներուն, որոնք միակ դարմանն են տիրող յուսաբէկ վիճակին եւ անոր պատճառներէն հանդիսացող արտագաղթին: Ի զուր տեղ չէ, որ Ծիրակի թեմի խիզախ ու ազգանուէր առաջնորդ Միքայէլ Եպսկ. Աջապահեան կ'ըսէ թէ արտագաղթը համազգային աղէտ է, այն վտանգաւոր չափերի է հասնում: Սրբազանը կը հաւատայ թէ ինդիքը արդար կառավարման մէջ կը կայանայ, որու բացակայութեան ժողովուրդի զգալի հատուած մը իր ապագան կապած է դուրսի հետ ու միջոցներ կը փնտռէ արտագաղթելու տարբեր երկիրներ: Իր կարծիքով՝ «Իշխանութիւններն իրականացնում են «Արի Տուն» ծրագիրը, բայց դրա փոխարէն արժէր, որ տնեցիներին պահէին տանը»:

Ինչ կը վերաբերի «Արի Տուն» ծրագրին, Սփիւռքի նախարար Տիկ. Հրանուշ Յակոբեանն ալ այս տարի այցելեց Լոս Անճելըս ու հանդիպումներ ունեցաւ տարբեր կազմակերպութեանց եւ կուսակցութիւններու հետ, բացատրելու ծրագրի գաղափարը,



նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը: Ինչպէս վերը նշեցինք, գաղափարը շատ գեղեցիկ է, բայց լոգունգային յայտարարութիւններէ անդին, գործնական ի՞նչ քայլեր կ'առնուին ստեղծելու այն տարրական պայմանները, որոնք պիտի քաջալերեն դէպի հայրենիք ներգաղթը: Որոնք պիտի վստահութիւն ներշնչեն սփիւռքահայուն, որ իր ազգասիրական զգացումները շուտով պիտի չի տրորուին աւատապետներու գլանին տակ: Որոնք պիտի համոզեն սփիւռքահայը, որ իր անձի, ինչքի եւ մարդու իրաւունքներու պաշտպանութեամբ արժանավայել կեանք ու ապագայ խոստացող պայմանները ապահովուած ըլլան արդար համակարգի մը գոյութեամբ: Երբ մենք արդարօրէն այս մտահոգութիւնները կը բարձրաձայնենք, անոնք պէտք չէ ընդունուին որպէս պարսաւանք իշխանութիւններու հասցէին եւ նախարարուհին մղեն հակադարձ մեղադրանքներու: Անոր յաճախ գործածած լոգունգներէն մին՝ «հայրենիքը պիտի սիրես ո'չ թէ որովհետեւ լաւն է, այլ որովհետեւ քոնն է», կրնայ վայրկեանին

ականջներու լաւ հնչել, բայց երբ գոյութիւն ունի աւատապետ վերնախաւ մը, որ այդ «քոնն»ը ոտնակոխ կ'ընէ յօգուտ իր շահերուն, ապա դժբախտաբար այդ լոգունգի իմաստը կը փճանայ: Նախարարուհին մեր հայրենասիրութիւնը կասկածի տակ դնելէ առաջ, թող իր շուրջը նայի եւ համեմատէ զայն աւատապետներու հայրենասիրութեան հետ: Հետեւաբար, նախքան «Արի Տուն» եւ նման ցուցադրական եւ զբօսաշրջիկային ծրագրերով խանդավառութեան եւ անոր յաջորդող յուսալքման ալիքներ յառաջացնելը, լաւ կ'ըլլայ որ գործնական քայլեր առնուին այդ տունէն ներս կարգ ու կանոնի հաստատման համար: Բարեբախտաբար «Արի Բանակ» խեղկատակութիւնը կարճ տեւեց:

Այնքան ատեն, որ մեր պետական այրերը հայրենիքի շահը չեն գերադասեր իրենց անհատական շահերէն ու չեն նպաստեր երկրէն ներս ժողովրդավար ու արդար համակարգի մը ստեղծման, ամէն տեսակի «Արի Տուն»եր անկարող պիտի ըլլան ոչ միայն ներգաղթի խթանման նաեւ արտագաղթի կասեցման:

**ԱՐԱ ԱՐԱՐԱՍԵԱՆ ԲԱԶԶԱՖԻՍ**  
**ՁԻ ՆՈՒԻՐԱԾ Է**  
Լիպիոյ յաղթանակած ապստամբները եւ ՆԱԹՕ-ն ամբողջ Լիպիայով եւ նոյնիսկ Ափրիկէով մէկ կը փնտռեն այդ երկրի նախկին բռնապետ Մուամմար Քադաֆին: Իբրեւ մեթոտական օգնութիւն "Առաւօտ" կ'առաջարկէ իր վարկածը: Պէտք է փնտռել ոչ թէ գնդապետը, այլ ախալթեքիեան ցեղատեսակի ձին, որ ընդամէնը երեք տարի առաջ բռնապետին նուիրած է ռուս-լիպիական գործարար խորհուրդի համանախագահ Արա Աբրահամեան: Եթէ գտնուի ձին, ապա հնարաւոր է՝ կենդանին ինքը փնտուղները կը տանի իր տիրոջ մօտ: «Առաւօտ»

**Bedros S. Maronian** 818/500-9585  
**Siamanto B. Maronian** 818/269-0909  
SERVING THE COMMUNITY SINCE 1975  
More locations and more ways to service your insurance and financial needs  
6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048  
805 East Broadway Glendale, CA 91205  
300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101  
• Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability  
• Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning  
• Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B  
A.B.A. INSURANCE SERVICES  
Insurance coverage can help you financially!  
Ապահովագրութիւնը Աճիրածից է  
Coverage & Protection should be on the top of your priority list.  
Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



# ԱՄԵՐԻԿԱՅ ՔԻՏՆԱԿԱՆ ԱՐԱ ՍԱՆՃԵԱՆԸ ԲԱՑԱՏՐՈՒՄ Է. ԻՆՉՈՒՒ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԵՎ ՆԱԺԱՄԻ ՄԵՋ

ՎԱՀԱՆ ԻՇԽԱՆԵԱՆ  
WWW.ZHAM.LAM

## (Մաս 1)

1. Հայագիտական որակեալ գիտական աշխատանքներ

Հումանիտար ոլորտի՝ պատմության, գոյեց նաև գրականագիտության ու գրաքննադատության մէջ բացառապէս Երեւանում մասնագիտացած երիտասարդ գիտնականները սովորաբար անհաղորդ են 1980ականներին սկսուած այս բնագաւառներ մուտք գործած գիտական նոր ուղղութիւններին եւ առայժմ չեն կարող հեշտութեամբ տպագրուել ազդեցութեան գործակից (ԱԳ) ունեցող միջազգային ժուռնալներում: Իսկ վերջին երեսուն տարում պատմագիտության բնագաւառում՝ պոստմոդերնիզմի ազդեցութեան տակ նկատուող տեսական ու մեթոդոլոգիական փոփոխութիւնները բաւականին արմատական են: Օտարերկրեայ որոշ մասնագէտներ դրանք նոյնիսկ համեմատում են Ուշ միջնադարում եւ Նոր ժամանակների սկզբում՝ վերածնութեան ու Լուսաւորութեան դարաշրջաններում իրականացուած արմատական ինտելեկտուալ փոփոխութիւնների հետ, որոնք միջնադարեան աշխարհայեացքը փոխարինեցին նրանով, ինչը որ այսօր նոր ու ժամանակակից ենք համարում: Հայոց մօտ այդ նոյն փոփոխութիւնը կատարուեց 19-րդ դարում:

Այս կարծիքն է յայտնում Միչիկընի համալսարանի Տիրպորն քաղաքի մասնաճիւղի դասախօս Արա Սանճեանը՝ պատասխանելով այն հարցին, թէ ինչու է Հայաստանի հումանիտար ոլորտի գիտնականները չեն տպագրում ուսումնասիրութիւնները ազդեցութեան գործակից (ԱԳ) ունեցող ժուռնալներում:

Գիտական ժուռնալների ազդեցութեան գործակիցը տալիս են ամերիկեան Թոմսոն Ռոյտերս եւ եւրոպական Սկոպուս ինստիտուտները, որոնցով էլ միջազգային ասպարեզում որոշում է ժուռնալի գիտական որակը: Երկու ինստիտուտների տուած ԱԳ-ները հիմնականում համընկնում են:

ԱԳ ունեցող ժուռնալներում հայաստանաբնակ հասարակագետների բացակայութեան հարցը սկսեց քննարկուել այն բանից յետոյ, երբ խրախուսագումար տրուեց 2010 թ. ԱԳ ունեցող ժուռնալներում տպագրութիւն ունեցող մինչեւ երեսունհինգ տարեկան 95 գիտնականների, որոնցից միայն մէկն էր հասարակագիտական ոլորտից՝ Թրքագէտ Վահրամ Տէր-Մաթեոսեանը: Նրա «Հայկական համայնքը եւ Արդարութիւն եւ զարգացում կուսակցութիւնը. վստահութեան որոնում կիսայուսնի տակ» (The Armenian Community and the AK Party: Finding Trust Under the Crescent) յօդուածը տպագրուել է Թուրքիայում հրատարակուող «Insight Turkey» եռամսեայ հանդէսում, որ ամենացածր գործակից ունեցող ժուռնալներից է, գործակիցը՝ 0,0001: Մնացած 94 բնագէտների հրատարակումները տասնամեամ աւելի բարձր գործակից ունեցող ժուռնալներում են:

Խրախուսագումար հատկացնելու գաղափարը ներկայացրել էր «Պահանջում ենք գիտութեան ֆի-



նանսավորում» (ՊԳՖ) նախաձեռնութիւնը, գումարը յատկացրել էր «Գաղիկ Մառուկեան» հիմնադրամը:

ՊԳՖ-ն «Գաղիկ Մառուկեան» հիմնադրամի ֆինանսաւորմամբ հասարակագիտութիւնը խրախուսելու համար նոր խրախուսագումարի համար յայտարարութիւն արեց 2005-2011թթ. ԱԳ ունեցող ժուռնալներում հրատարակում ունեցող մինչեւ 41 տարեկան հասարակագէտների համար: Ներկայացուած հայտերից միայն վեցինը անցան՝ իրենց ինը յօդուածներով: Նրանցից միայն մէկի հրատարակումն էր բարձր ԱԳ ունեցող ժուռնալում. Հնագիտութեան եւ ազգագրութեան ինստիտուտի գիտաշխատող Ռոման Յովսէփեանի համահեղինակած «The Earliest Finds of Cultivated Plants in Armenia: Evidence from Charred Remains and Crop Processing Residues in Pisin from the Neolithic Settlements of Aratashen and Aknashen» յօդուածը տպագրուել էր 2008-ին գերմանական «Vegetation History and Archaeobotany» ժուռնալում, որի գործակիցը 2,091 է:

Ֆէյբուքեան ՊԳՖ խմբում ծաւալուած բանավեճներում բնագէտները քննադատում են հասարակագէտներին, որ չեն տպագրում ԱԳ ունեցող ժուռնալներում՝ ակնարկելով, թէ նրանց մասնագիտական որակը ցածր է:

Ամէն տարի ԱԳ ունեցող ժուռնալներում Հայաստանից միջինը մօտ 500 յօդուած է տպագրուում, որից միայն մօտ եօթն է հասարակագիտութիւնից, երբ միեւնոյն ժամանակ աշխարհի շատ երկրներում (եւրոպական երկրներ, ԱՄՆ եւ այլն) ԱԳ ունեցող ժուռնալներում տպագրութիւնների կէսից աւելին հասարակագիտութիւնից է:

Աւանդական պատմագրութեան մէջ Վան քաղաքը կոչուել է Շամիրամակերտ: Մովսէս Խորենացին պատմում է, որ Արա արքայի մահուանից յետոյ Շամիրամը գալիս է Հայաստան, ճանապարհին կանգ առնում Վանայ լճի ափին: Ասորիների թագուհին հրապուրւում է բնութեամբ, սառնորակ աղբիւրներով եւ Վանայ լճի ափին կառուցուած Շամիրամակերտ քաղաքը: Այսօր էլ Վան քաղաքում կայ Շամիրամի անունով թաղ: Սա իհարկէ առասպել է, սակայն հազարամեայ պատմութիւն եւ մշակույթ ունեցող բոլոր քաղաքների մասին էլ գրուել են առասպելներ, յօրինուել հերոսապատմւմներ:



**Մեքրի գուռը**

Վան քաղաքը հիմնադրուել է մ.թ.ա. IX դարի առաջին կեսում: Հնագոյն շրջանում կոչուում էր Տուչպա: Ուրարտական պետութեան կենտրոնական շրջանի Բիայնա երկրում ապրող հայերը քաղաքը կոչել են Վան: Վան անունը համարում են Բիայնայի տառադարձութիւնը, որը նշանակում է «ապրելու տեղ», «բնակավայր»:

Վանում գարգացած էին ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը, գրականութիւնն ու արուեստի մնացեալ ճիւղերը: Մինչեւ Հայոց ցեղասպանութիւնը քաղաքում եւ կից Այգեատանում ապրում էին բնիկները՝ հայերը:

Այսօր քաղաքը հիմնականում քրդաբնակ է:

Պատմագրական աղբիւրներում պահպանուել են բազմաթիւ յիշողութիւններ Վանի մասին: Զբօսաշրջիկներն ու պատմիչները Վանը ներկայացնում են բնութեան եւ ճարտարապետական լուծումներով ներդաշնակ մի քաղաք, որը ապշեցնում էր իր գեղեցկութեամբ արեւելքի եւ արեւմուտքի ժողովուրդներին:

Ներկայիս Վանը ճարտարապետական լուծումներով ու պատմական դիմագծով չի առանձնա-

նում: Բնաջնջելով եւ բռնագողթի ենթարկելով Վանի բնիկ ժողովուրդին՝ հայերին, թուրքերը մէկ վայրկեան անգամ չյապաղելով՝ ոչնչացրել են նաեւ հայկական տները, թաղամասերը, աւերել են հայկական եկեղեցիները: Վան քաղաքում հայի ներկայութիւնը յիշեցնող շէնքեր չեն պահպանուել:

Հայկական դպրոցները, թաղամասերն ու եկեղեցիները, որոնք մէկ դար առաջ քաղաքի գարդն են հանդիսացել, այսօր աւերուած վիճակում են:

Դժուար է խոստովանելը, սակայն ներկայիս Վանը խորթ է հայ ուխտագնացին: Քաղաքը չի պահպանել իր ճարտարապետական դէմքը: Քաղաքում վեր են խոյանում գոլանաւոր բարձրադաս շէնքեր, շատրուաններ, մի քանի տասնակի հասնող մզկիթներն ու Աթաթուրքի արձանները: Ծարտարապետական համակարգուած որեւէ լուծում քաղաքում չկայ:

XX դարի սկզբին Վանում եղել է 12 եկեղեցի, որոնցից 10՝ գործող: Քաղաքում գործել են կեդրոնական եւ Երամեան վարժարանները: Այսօր վարժարանների շէնքերը պահպանուած չեն, իսկ եկեղեցիները հիմնականում վերածուած են գոմերի, աղբանոցների, որտեղ քրդերը պահում էին իրենց խոտը կամ եկեղեցին օգտագործում որպէս փարախ: Թէպէտ


Վանի նահանգապետը խոստացել էր, որ քաղաքի եկեղեցիները պէտք է մաքրուեն, նորոգուեն եւ դառնան գործող, դրանք այդպէս էլ մնացին խօսքեր, բացառութեամբ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու:

Վարագայ լեռան գոյգ վանքերը գտնւում են համանուն լեռան վրայ: Երկու վանքերն էլ Սուրբ Նշան անունն էին կրում: Ժամանակին շէն ու հօր վերին Վարագայ եկեղեցին այժմ աւերակ է: Պահպանուած քարերն ու փլակոյտերի մնացորդները մարդկային դաժանութեան մասին են վկայում:

Ներքին Վարագի վրայ է գտնւում Սուրբ Նշան Վարագայ վանքը: Այն կոչուում է նաեւ Մենաստան Վարագայ Սուրբ Խաչի: Եկեղեցին կառուցուել է 10-րդ դարում: 1860-ականներին եկեղեցին համբաւ ձեռք բերեց Խրիմեան Հայրիկի օրօք, որը տեղի վանահայրն էր: Խրիմեան Հայրիկը բացեց գիշերօթիկ ժառանգաւորաց դպրոցը, հիմնեց տպարան եւ հրատարակեց «Արծիւ Վասպուրականի» ամսագիրը:

Վասպուրական աշխարհի պաշտելի սրբավայրերից մէկն այսօր կիսաւեր մի շինութիւն է: Եկեղեցին տարիներ շարունակ ծառայել

է իբրեւ գոմ եւ միայն մի քանի տարի առաջ հայ նուիրեալ ընտանիքի՝ Վոլոգիա եւ Հուլիսիմէ Առուշանեանների ջանքերով ու աջակցութեամբ մաքրուել ու բարեկարգուել է: Նրանք պատմում են՝ երբ առաջին անգամ վարագայ եկեղեցի այցելեցին, այն վերածուած էր սովորական աղբանոցի: Խօսքերով դժուար է նկարագրել, թէ ինչպիսի տեսք ունէր եկեղեցին այդ ժամանակ: Եկեղեցու հարեանութեամբ ապրող քրդերը 11 դարի կենսագրութիւն ունեցող կառուցող օգտագործում էին որպէս աղբանոց եւ գոմ: Համապատասխան վարձատրութեան դիմաց տեղացի քրդերից մէկը համաձայնում է մաքրել տարածքը աղբից եւ անասունների կեղտից: Քուրդը պատմում էր, որ 10 բեռնատար մեքենայ աղբ է դուրս հանել եկեղեցուց:



Աղթամար կղզի

Այսօր էլ եկեղեցում կարելի է գզալ գոմի, աղբի, անասունների ու խոնաւութեան հոտը: Արեւմտեան Հայաստանի պահպանուած բոլոր եկեղեցիների նման Վարագայ վանքում էլ շուրջ մէկ դար աղօթք չի հնչել, պատարագ չի մատուցուել, խունկ չի ծխուել: Խոնկի եւ մոմի բոյրի փոխարէն եկեղեցում գզացւում է խոնաւութեան սաստիկ հոտը: Եկեղեցու գմբէթը հիմնովին աւերուել է, դուռը փայտեայ է, ամէն անգամ բացել-փակելուց տպաւորութիւն է ստեղծւում, որ եկեղե-

ցին կը փլուի: Եկեղեցու խորանը չի պահպանուել, ներսը չի լուսաւորուում: Պատերին՝ մթութեան մէջ, կարելի է նշմարել արդէն խամրացած որմնանկարները, սրբերի պատկերներն ու խաչերը: Բազմաթիւ որմնանկարներ խոնաւեցել են, գունաթափուել, բազմաթիւ քանդակներ, յատկապէս խաչքարերը, քերուած են, տձեւացած: Թուրքերն ու քրդերը այսպէս են արտայայտել իրենց ատելութիւնն ու անհանդուրժողականութիւնը քրիստոնէութեան եւ հայերի հանդէպ:

Առաւել անմխիթար ու սարսափելի է եկեղեցու տեսքը դրսից:

Շարք էջ 19

Hi-Am  
Charity Foundation Presents  
OCTOBER 9, 2011  
ONE DAY, TWO CONCERTS  
3:00 pm & 7:00 pm

ALEX  
ԱՐԵՎԻԿ  
THEATRE

For ticket information:  
TicketMicket.com, Tel: 818 265 0506  
Hi-Am Foundation Tel: 818 395 1969  
Alex Theatre Tel: 818 243 2539





PLEASE DRINK RESPONSIBLY

# MISSION

## WINE & SPIRITS

AMAZING SELECTION & EVERYDAY LOW PRICES!

facebook.com/missionliquor



### OPEN SUNDAYS!

GLENDALE STORE ONLY 10AM-4PM

twitter.com/missionliquor



 <div data-bbox="342 854 574 1056"> <p><b>29<sup>99</sup></b></p> </div> <p><b>REMY MARTIN VSOP COGNAC</b> 750 ML</p>	 <p><b>FUSSIGNY XO COGNAC</b> 750 ML</p> <div data-bbox="816 1041 977 1181"> <p><b>69<sup>99</sup></b></p> </div>	 <p><b>FUSSIGNY SELECTION COGNAC</b> 750 ML</p> <div data-bbox="1199 1041 1360 1181"> <p><b>19<sup>99</sup></b></p> </div>	 <div data-bbox="1622 854 1864 1056"> <p><b>18<sup>99</sup></b></p> </div> <p><b>TSAR ALEXANDER I VSOP COGNAC</b> 750 ML</p>
 <div data-bbox="342 1367 574 1569"> <p><b>22<sup>99</sup></b></p> </div> <p><b>BELUGA VODKA</b> 750 ML</p>	 <p><b>DANTY XO COGNAC</b> 750 ML</p> <div data-bbox="816 1414 977 1554"> <p><b>16<sup>99</sup></b></p> </div>	 <p><b>RUSSIAN STANDARD PLATINUM</b> 750 ML</p> <div data-bbox="1199 1414 1360 1554"> <p><b>14<sup>99</sup></b></p> </div>	 <div data-bbox="1622 1367 1864 1569"> <p><b>24<sup>99</sup></b></p> </div> <p><b>ROBERTO CAVALLI VODKA</b> 750 ML</p>
 <div data-bbox="342 1864 574 2066"> <p><b>21<sup>99</sup></b></p> </div> <p><b>GREY GOOSE VODKA OR BLACK LABEL WHISKY</b> 750 ML</p>	 <p><b>IS VODKA</b> 750 ML</p> <div data-bbox="816 1787 977 1926"> <p><b>16<sup>99</sup></b></p> </div>	 <p><b>KAMCHATKA VODKA</b> 1.75 L</p> <div data-bbox="1199 1787 1360 1926"> <p><b>9<sup>99</sup></b></p> </div>	 <div data-bbox="1622 1864 1864 2066"> <p><b>16<sup>99</sup></b></p> </div> <p><b>CAZADORES BLANCO OR 1800 REPOSADO</b> 750 ML</p>
 <p><b>MEZZACORONA MERLOT</b> 750 ML</p> <div data-bbox="342 2501 493 2641"> <p><b>1<sup>99</sup></b></p> </div>	 <p><b>KOTAYK ARMENIAN BEER</b> 16.9 OZ</p> <div data-bbox="776 2501 937 2641"> <p><b>98¢</b></p> </div>	 <p><b>KOTAYK ARMENIAN BEER</b> 11 OZ - 6 PK</p> <div data-bbox="1260 2501 1411 2641"> <p><b>4<sup>98</sup></b></p> </div>	 <p><b>KOTAYK ARMENIAN BEER</b> 16.9 OZ - 20 PK</p> <div data-bbox="1693 2501 1844 2641"> <p><b>18<sup>99</sup></b></p> </div>



PASADENA  
GLENDALE  
SHERMAN OAKS

1785 E. WASHINGTON BLVD.  
825 W. GLENOAKS BLVD.  
13684 BURBANK BLVD.

626-794-7026  
818-242-0688  
818-585-6529

STORE HOURS: MON - SAT, 9AM-8PM. (GLENDALE STORE OPEN SUNDAY 10AM-4PM)

**SOUTHERN CALIFORNIA'S PREMIER WINE & SPIRITS SUPERSTORE!**

ALL PRICES MAY REMAIN IN EFFECT LONGER THAN THE TIME PERIOD INDICATED. WE RESERVE THE RIGHT TO LIMIT QUANTITIES. SALES TAX EXCLUDED. PRICES SUBJECT TO CHANGE WITHOUT NOTICE. EXPIRATION DATE SEPTEMBER 17<sup>TH</sup> 2011



### ՄԱՆԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

#### ԱՒԵԼԻ ՄԵԾ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԻՋԵՒԻ ԽԱՆԴԸ

Որքան լաւ է ծնողների ու երեխաների փոխյարաբերութիւնները, այնքան քիչ է երեխաների միջեւ խանդը: Իւրաքանչիւր երեխայ բաւարարուած է իրեն բաժին հասած ծնողական սիրով ու հոգատարութեամբ, եւ նրան չի անհանգստացնում, որ եղբայրներն ու քույրերն էլ են օգտուած ծնողների ուշադրութիւնից:

Ապահովութեան գագաթում երեխան քաղում է ծնողների սիրուց, որոնք նրան ընդունում են այնպիսին, ինչպիսին կայ, այսինքն՝ տղայ, թե աղջիկ, խելօք, թէ չիմար, գեղեցիկ թէ սգեղ: Եթէ ծնողները շարունակ համեմատում են նրան եղբայրների ու քույրերի հետ, երեխան թշնամանքով է լցւում ընտանիքի միւս երեխաների ու ծնողների նկատմամբ: Որքան քիչ համեմատէք եղբայրներին ու քույրերին, այնքան լաւ:

Որպէս կանոն, աւելի լաւ է մայրը չմիջամտի այն երեխաների վէճերին ու ծեծկռտուքին, որոնք կարող են ինքնուրոյն պաշտպանել իրենց իրաւունքները: Եթէ մայրը փնտրում է մեղաւորին, դրանով բորբոքում է երեխաների միջեւ խանդի զգացումը: Ինչ որ չափով երեխաների միջեւ բոլոր մանր գծուած թիւնները ծագում են խանդի պատճառով, այն պատճառով, որ իւրաքանչիւրը ձգտում է նուաճել ծնողների նախապատուութիւնը: Եթէ

կռուի ժամանակ ծնողները շարունակ պաշտպանում են որեւէ մէկին, աշխատելով որոշել, թէ ով է արդար եւ ով մեղաւոր, ապա դա միայն նպաստում է նոր գծուած թիւնների առաջացնելուն, որովհետեւ իւրաքանչիւրը յոյս ունի, թէ արդար է, հետեւապէս ուզում է վայելել ծնողների սիրտը: Եթէ մայրը ստիպուած է կանխել ծեծկռտուքը, որպէսզի փրկի երեխաներից մէկի կեանքը կամ կանխի ակնյայտ անարդարացիութիւնը, կամ էլ սեփական հանգստութեան համար վերականգնի խաղաղութիւնը, նա պէտք է պարզապէս պահանջի, որ կռուի դադարեցնեն, հրաժարուի լսել երկու կողմերին, ասի, որ իրեն հետաքրքիր է իմանալ, թէ ով է արդար եւ ով մեղաւոր, այնուհետեւ խօսակցութիւնը փոխի այլ թեմայի շուրջ ու մոռնայ տեղի ունեցածի մասին: Մի դէպքում կարելի է առաջարկել որեւէ փոխզիջում, մի այլ դէպքում՝ որեւէ բանով շեղել երեխայի ուշադրութիւնը:

#### ԵՐԵՒԱՅԻ ԽՕՄՔԻ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ

Երեխաները հիմնականում առաջին բառերը սկսում են արտասանել կեանքի 9-18րդ ամիսների միջեւ: Այնպէս, որ 2-3 տարեկան երեխաները բաւականին ընդարձակ բառապաշար են ունենում: Երեխայի խօսքի զարգացման վրայ ազդում

են մի շարք գործօններ:

Մեծերին ընդօրինակելու ճանապարհով երեխաները խօսել են սովորում: Որքան շատ հնչիւններ են արտասանում երեխայի ներկայութեամբ, այնքան աւելի արագ են նրանք խօսել սովորում: Մեզանից պահանջում է երեխաների հետ խօսել դանդաղ, հանգիստ, սիրալիր եւ անընդհատ կրկնել բառերը: Երեխայի կեանքի 9-րդ ամսից սկսած, երբ նա նայում է առարկաներին կամ ցոյց է տալիս դրանք, պէտք է աւելի չաճախ տալ դրանց անունները: Երբ փոքրիկը փորձում է արտասանել ստուշալ առարկայի անունը, պէտք է քաջալերել նրան՝ ժպտալ ու գրկել նրան:

Այս ամէնը կը ներշնչի փոքրի-

կին, որ աւելի լաւ է տալ առարկայի անունը, քան թէ մասնացոյց անել այն:

Պէտք է չիշել, որ փոքրիկը ընդօրինակում է մեր լեզուն, ուստի չպէտք է մանկական բառեր օգտագործել:

Նաեւ անհրաժեշտ է ուղղել ձեր փոքրիկի արտասանած իւրաքանչիւր սխալ բառը, սակայն պէտք է դա անել շատ զգուշօրէն, որպէսզի փոքրիկը մեծահասակների հետ խօսելու ցանկութիւն ունենայ: Կարող էք բարձրաձայն, կարծես խորհրդածելով, կրկնել նրա ասածը, բայց բառերը ճիշտ արտասանէք: Այդ դէպքում երեխան կ'ընկալի ճիշտ արտասանութիւնը:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻ ԸԱՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
 1060 N. ALLEN AVE. PASADENA  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈԱԶԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**

Չեր Ծանուցումները Վստահեցէք  
**«Մասիս» Շարաքաքերթի**  
 T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net

"Քաջ Նապար" հանդէսը եւ հեռուստաժամը Ներկայացնում է

# 12-րդ ամեակի ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԳԻ ԲԻՄՆԱԳՐԱՍԻ, ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՆՂԱՍ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՅ ՄԱՆԿԱՍՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԵԱՆ ԲԱՍԱՐ (ԲԻՄՆԱՅ 1999թ.)

**Կիրակի, հոկտեմբեր 9, 2011**  
**երեկոեան ժամ 5-11-ը**

**ARMENIAN AMERICAN ORPHANS CHRISTMAS FUND, INC.**  
 FOR DISABLED CHILDREN AND FOR THE RESTORATION OF CHILDREN'S HOMES  
 Sponsored by "KACH NAZAR" Magazine & TV Show

# 12 ANNIVERSARY NATIONWIDE TELETHON

**ON SUNDAY OCTOBER 9, 2011**  
**5pm-11pm**

www.forourkids99.com / e-mail: forourkids99@gmail.com  
 (818) 239-6880 • (818) 246-0125 • (818) 606-2070 • (818) 246-2070  
 Non-profit organization a tax-exempt 501(c) 3 charity ID #27-1381531






# ԻՆՉՈ՞Ւ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹԻՒՆԸ ԳԳՆԱԺԱՄԻ ՄԵՋ

Ծարուճակուած էջ 7-էն

Լոս Անճելըսի համալսարանի հայ գրականութեան դասախօս Պիտեր Քաուրիի թարգմանութեամբ ու խմբագրմամբ: Թէեւ այս հրատարակչութիւնը լիարժէք ակադեմիական չի համարուում, այսուհանդերձ ամերիկեան յարգուած այլ հրատարակչութիւնների նման, այն իւրաքանչիւր գիտական գիրք հրատարակում է միայն մի քանի գաղտնապահական գիտական դրական գրախօսութիւն ստանալուց հետո: Սանճեանը գտնում է, որ Հայաստանում կան հումանիտար ոլորտի այլ գիտնականներ, որոնց գրքերը նոյնպէս կարող են անգլերէն թարգմանուել եւ մանր խմբագրական պատշաճեցումներից յետոյ տպուել դրսում: Օրինակ, Ալբերտ Մուշեղյանի «Մովսէս Խորենացու դարը» (2007, Պետհամալսարան) մի քիչ կառուցուածքային խմբագրման դէպքում կը համապատասխանի արեւմտեան լաւագոյն հրատարակչատների չափանիշներին:

Սակայն, նման աշխատութիւնները կարող է մերժեն տպագրել միայն այն պատճառով, որ այս թեմայով գիրքը քիչ հաւանական է, որ շատ վաճառուի: Հրատարակչութիւնը ԱՄՆ-ում բիզնէս է, եւ եթէ հրատարակչութիւնը մտահոգ է, թէ իր տպագրած գիրքը պիտի չվաճառուի, չի հրատարակի կամ հեղինակից կը պահանջի սուբսիդ: Բայց «Խորենացու դարը» գրքի որակը ունեցող որեւէ աշխատութիւն, նոյնիսկ, եթէ թեման խիստ մասնագիտական է, յօդուածների բաժանելու եւ ըստ այնմ խմբագրելու դէպքում ԱԳ ունեցող ժուռնալները անպայման կը տպագրեն:

Սակայն, Արա Սանճեանը ասում է, որ սրանք, դժբախտաբար, եզակի դէպքեր են: Հայաստանում հումանիտար ոլորտի գիտնականները սովորաբար շատ ծանօթ չեն օտար երկրներում հրատարակուող ԱԳ ունեցող ժուռնալների բովանդակութեանը, աւանդույթներին, գրելաոճին, ընդհանրապէս՝ մշակույթին, որպէսզի նրանց համապատասխան յօդուածներ գրեն, իսկ դրանց ծանօթանալու հնարաւորութիւններն էլ Երեւանում դեռեւս սահմանափակ են:

### (Մաս 2)

Արա Սանճեանը շարունակում է ներկայացնել այն խնդիրները, որոնց պատճառով Հայաստանի հասարակագէտները չեն տպագրում Ազգեցութեան գործակից ունեցող ժուռնալներում:

2. Հումանիտար գիտութեան ճգնաժամի պատճառները. Աշխարհին անհաղորդ լինելը

«Որպէսզի կարողանաս այս օտար ժուռնալներում տպուես, պէտք է նրանց մշակույթին ծանօթ լինես, ուրեմն ուսման ընթացքում դասախօսը պէտք է յանձնարարի, որ ուսանողները այս ժուռնալներից յօդուածներ կարդան, եւ ուսանողը պարբերաբար կարդալով՝ կամաց-կամաց այդ մշակույթին ծանօ-

թանայ, հասկանա, թէ այնտեղ հարցադրումները ինչպիսին են, տեսնի, թէ նրանց մօտ գիտական ապարատը ոնց է կազմուում եւ այլն: Սակայն ընդհանրապէս Հայաստանում բարձրագոյն կրթութեան մէջ, գոնէ պատմութեան պարագայում, կարծում եմ, որ այսպիսի բան համարեա չկայ: Այսինքն, երբ ուսանողը մտնում է կուրս, եւ իրեն տալիս են գրականութեան ցանկը, այն սովորաբար միայն հայերէն եւ ռուսերէն է:

«Երբ սկսես կարդալ այդ ժուռնալները, կը սկսի մտահորիզոնդ լայնանալ, արդէն չես բաւարարուի լսարանի մէջ լսածովդ: Իմ անձնական փորձը պատմեմ: 90 թիւն էր, երբ Մեծ եղեռնի առաջին միջազգային գիտաժողովը կազմակերպեցին Երեւանում: Հրաւիրուած օտարերկրեայ մասնակիցներից մէկը եկել էր պատմութեան ֆակուլտետ եւ իր աշխատութիւնները թողել: Ֆակուլտետի մէջ անգլերէն սահուն կարդացող միակ դասախօսը հանգուցեալ Վալտեր Դիլթայանն էր եւ ժուռնալները նրա մօտ էին: Նրանից խնդրեցի՝ «ընկեր Դիլթայան, կրնա՞մ այս ժուռնալները կարդալ»: Տուեց, առա-կարդացի, 22 տարեկան էի, Պէյրութում սովորած անգլերէնս լաւ էր: Եւ այդ յօդուածները՝ 19-րդ դարում հայ ազգային եւ բանուորական դասակարգային ինքնագիտակցութեան զարգացման մասին ինձ համար հարցադրումների նոր աշխարհ էր, որոնք այդ օրերում երբէք Երեւանի մէջ չկային: Այն ժամանակ ինձ համար նորութիւն էին այդ յօդուածներում օգտագործուած նիւթերը՝ չէին պատմաբան Միրոսլավ Հրոսի ուսումնասիրութեան արդիւնքները կենտրոնական եւ Արեւելեան Եւրոպայում ազգային զգացումների զարգացման մասին, դրանք կարելի է հայկական փորձի հետ համեմատել եւ այլն: Ուրեմն, երբ սկսում ես կարդալ օտար ժուռնալներ քո հարցադրումների շրջանակը բնականաբար լայնանում է»:

ՊԳՖ-ն առաջարկել է Մրցութեան հիմնադրամին Հայաստանի գիտնականների եւ ուսանողների համար բաժանորդագրուել Thomson Reuters-ի եւ Scopus-ի շտեմարաններին, որն արժէ տարեկան 180 հազար տոլար: Երեւանի համալսարանի իզմիրեան գրադարանում հնարաւոր է մուտք գործել Գալիլէոնիայի նահանգային համալսարան-Ֆրեզնոյի գրադարանի շտեմարան, իսկ Բժշկական համալսարանի գրադարանում բժշկական հարուստ շտեմարաններ: Բայց այդ հնարաւորութիւնը դասախօսներն ու ուսանողները ունեն միայն համալսարանի գրադարանում: Մինչդեռ այլ երկրներում իւրաքանչիւր դասախօսի եւ ուսանողի տրուում է հնարաւորութիւն ցանկացած համակարգչից իր գաղտնաբառով մտնել իր համալսարանի շտեմարան:

«Երբ ես Երեւանում սովորում էի այդ ժուռնալները Հայաստան չէին հասնում, -յիշում է Սանճեան-

նը: - Այժմ լսել եմ թէ մի սիստեմ կայ համալսարանում օգտուելու Գալիլէոնիայի նահանգային համալսարան-Ֆրեզնոյի համալսարանի շտեմարանից: Այս շտեմարանին ես ծանօթ եմ: Ֆրեզնոյում դասաւանդել եմ մէկ կիսամեակ: Այստեղ տասնեակ հազարաւոր ժուռնալներ կան: Ամերիկայի մէջ այս շտեմարաններից օգտուելը շատ սովորական բան է, եւ Պէյրութ նստած գաղտնաբառովս կը մտնեմ իմ համալսարանի շտեմարանը եւ կը կարդամ, նիւթերի մեծագոյն մասը pdf կամ html ֆորմատով կրնամ քաշել ու պահել իմ անձնական համակարգիչի մէջ՝ ապագայ օգտագործման համար: Համալսարանը բոլոր ուսանողներին, պաշտօնէութեանը ու դասախօսներին (ներառեալ թոշակի անցած պրոֆեսորներին) տալիս է շտեմարան մուտք գործելու հնարաւորութիւն: Առաւել, եթէ իմ համալսարանի շտեմարանում չկայ փնտուած ժուռնալը կարող եմ պատուիրել համալսարանին, որը այլ համալսարանների գրադարաններում կը գտնի ինձ հարկաւոր եղած յօդուածը, կը պատճէնի եւ ինձ կ'ուղարկի: Օրինակ, մեր համալսարանի շտեմարանում չկայ «Պատմաբանասիրական հանդէսը»: Համալսարանում գործող Հայագիտական ուսումնասիրութեան կենտրոնի մասնաւոր գրադարանում «Պատմաբանասիրական հանդէսը» բազմաթիւ համարներ կան, բայց չարքը ամբողջական չէ: Եթէ ինձ կամ մէկ ուրիշին հարկաւոր է «Պատմաբանասիրական հանդէսը» տպուած մի յօդուած, որ մեզ մօտ պակասում է, երբ դիմեմ թէ այսինչ թիւի այսինչ յօդուածը ուզում եմ, նկարում բերում են ինձ, որ կարդամ եւ օգտագործեմ դասաւանդելիք նիւթերս պատրաստելու կամ ուսումնասիրութիւններ կատարելու ժամանակ»:

Սանճեանը ասում է, որ ԱԳ ունեցող ժուռնալներում չտպագրուելու միւս պատճառն այն է, որ հումանիտար ոլորտի գիտնականներից շատերը բաւարար չգիտեն անգլերէն, կամ այլ եվրոպական լեզուներ, որ կարողանան միջազգային ժուռնալների պահանջների համապատասխան յօդուածներ գրել. «այսօր երբ համալսարանում մասնագիտական ֆակուլտետ են աւարտում, բաւարար չափով անգլերէն չգիտեն, որ մագիստրատուրան կամ ասպիրանտուրան արտասահմանում շարունակեն: Ամերիկայում իմ հանդիպած հումանիտար տարբեր բնագաւառի Հայաստանից ժամանած ուսանողները համարեա բոլորը հա-

մալսարանի ուսմանա-գերմանական ֆակուլտետի կամ Բրիւստովի անուան լեզուագիտական համալսարանի շրջանաւարտներ են: Պատմութեան ֆակուլտետը թուում է չի պատրաստում կարգեր, որ հասկանան գիտութեան միջազգային ժարգոնը, կարողանան իրենց մտքերը բանաձեւել գիտական այդ լեզուով ու բառապաշարով: Եւ երբ Հայաստանի գիտնականները երբեմն ոչ գիտական անգլերէնով կը դրկեն յօդուածներ նոյնիսկ արտասահմանում տպուող օտարալեզու գուտ հայագիտական հանդէսներին, այնտեղ պատրաստակամութիւն չունեն նստել ու մանրամասն խմբագրել: Բնականաբար, գրագէտ անգլերէնով յօդուածներ ուղարկելը հետաքրքրութիւնների աւելի լայն շրջանակ ունեցող հանդէսների պարագայում շատ աւելի անհրաժեշտ է: Պէտք է հաշուի առնել, որ ԱԳ ունեցող հանդէսների մեծ մասը խմբագրում են ֆակուլտատիւ կամ կամաւոր հիմունքներով, ու խմբագիրները շատ ժամանակ չունեն տրամադրելու իւրաքանչիւր յօդուածի»:

Սանճեանը ասում է, որ 19-րդ դարի վերջում հրատարակ իջած եւ խորհրդային Հայաստանի առաջին տարիներին ստեղծագործած գիտնականներից շատերի աշխատութիւնները համապատասխանում էին իրենց ժամանակ գործող միջազգային չափանիշներին, քանի որ նրանք՝ Աճառեան, Մանանդեան, Աբեղեան, ինչպէս նաեւ նոյն ժամանակ Հայաստանից դուրս գործած Ադոնց, Յովսէփեան եւ ուրիշներ կրթութիւն էին ստացել եւրոպական մեծ համալսարաններում: Յաջորդ սերնդի առաջ՝ ստալինեան վարչակարգի եւ նրա յաջորդների երկիրը մեկուսացնելու քաղաքականութեան հետեւանքով փակուեցին համաշխարհային գիտական նոր ուղղութիւններին ու մեթոդներին մասնախալու դուները եւ նրանք մնացին խորհրդային գիտութեան համար թոյլատրելի շրջանակների մէջ. «Երկրորդ սերունդը կամաց-կամաց իր կապը կորցրեց իր ժամանակի եւրոպական գիտութեան հետ: Ես եթէ դասաւանդեմ Հայաստանում, ուսանողներին այսօր իսկ կը յանձնարարեմ կարդալ Մանանդեանի, Ադոնցի, Տէր-Մինասեանի, Մալխասեանի, Աշոտ Յովհաննիսեանի աշխատութիւնների մեծագոյն մասը, որովհետեւ դրանց մէջ առ այսօր ուսանելի շատ բան կայ, յատկապէս՝ գիտական բանավէճի բարձր կուլտուրա»:

(Յաջորդ համարով Մաս 3)

**massispost.com**  
daily news updates



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ**

Yes, I wish to subscribe to Massis Weekly  
Enclosed a check for (one year)  
\* \$50,00 for USA  
\* \$60,00 (second class), \$ 75,00 (Air Mail) for Canada.  
\* \$85,00 (second class), \$ 125,00 (Air Mail) Overseas.

Name: -----  
Address: -----  
City: ----- State:----- Zip Code:-----  
Country: -----  
Tel :----- Fax :-----



### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՈՐՈՇԵԼ Է

Շարունակում է 3-էն

գրեթե բոլորը հակուած էին գործն ի օգուտ ԼՏՊ-ի վճռել:

Պողոսեանը կարծիք է յայտնել, որ «Հայաստանում այժմ «բացարձակ բռնապետութիւն» է տիրում», որտեղ անհնար է խնդիրներն օրինական ճանապարհով լուծել: Նա ասել է, որ ներկայիս «բարոյական եւ հոգեբանական մթնոլորտը ստեղծուել են իշխող ռեժիմի կողմից»:

«Չնայած այն վախի մթնոլորտին, որ փորձում են ստեղծել իշխանութիւնները, Պողոսեանն ասաց, որ Լեւոն Տէր-Պետրոսեանը կարող էր հարիւր հազարաւոր մարդկանց դուրս հանել փողոց արտակարգ դրութիւնից յետոյ: Պողոսեանը չբացառեց այդ սցենարը եւ կարծիք յայտնեց, որ այդ դէպքում իշխանութիւնները կերկարաձգեն արտակարգ դրութեան ժամանակահատուածը, եթէ զգան, որ իրենց՝ իշխանութեան գլուխ լինելու հարցը վիճարկելի է դառնում»:

Նա նաեւ ասաց, որ իշխանութիւններն այնքան անամօթ էին, որ սպառնում էին ձերբակալել Տէր-Պետրոսեանին, չնայած որ նրանք դա անելու ոչ մի իրաւական հիմք չունէին: «Բայց նրանք կարող են անել այն, ինչ ուզում են», տրտնջում էր Պողոսեանը, ... գաղտնի նամակում գրում է Փենինզիոնը:

Դեսպանատան աշխատակիցները հարցրել են Պողոսեանին Մարտի 1-ից յետոյ չհրապարակուած մահուան դէպքերի հնարաւորութեան մասին, ինչպէս նաեւ այն պնդումների մասին, որ Լեւոնային Ղարաբաղից բանակային ուժեր են

բերուել՝ բռնութիւնները հանդարտեցնելու համար: Պողոսեանը նշեց, որ այդ լուրերը «ամբողջովին անհիմն չեն»՝ նշելով, որ ինքը 90-ականներին զբաղեցրել ազգային անվտանգութեան եւ ներգրին գործերի գերատեսչութիւններին ղեկավարի պաշտօնները եւ իրեն տեղեկատուութիւնը հասնում է «իր անցեալ դիրքերի պատճառով»:

Փաստաթղթի վերջում արուած իր մեկնաբանութեան մէջ Փենինզիոնը գրում է. «Մենք որեւէ հիմք չունենք հաստատելու դատաւոր Պողոսեանի մեղադրանքները, բայց այն փաստը, որ Հայաստանի բարձրագոյն ատենաներից մէկի ծառայողը նման բաներ է ասում, ինչ-որ բան նշանակում է: Պողոսեանը դատաւոր է նշանակուել Լեւոն Տէր-Պետրոսեանի իշխանութեան ընթացքում (1996 թուականին), եւ քանի որ նա չէր թաքցնում իր քաղաքական դիրքորոշումը, հաւանական է, որ վերջին քաղաքական իրադարձութիւնները նրա մօտ խիստ վրդովմունք են առաջացրել: Դեսպանատան աշխատակիցները այն տպաւորութիւնն ունէին, որ նա խօսում էր որպէս մի հայրենասէր մարդ»:

Ի դէպ, վալերի Պողոսեանը միակ դատաւորն էր, որը 2008 թ. նախագահական ընտրութիւնների արդիւնքները ՄԴ-ում բողոքարկելու ժամանակ չեկաւ դատարան: Նա այդ ընթացքում հիւանդ էր: Իսկ մէկ այլ դատաւոր, երջանակալիշատակ Ռաֆայէլ Պապայեանը միակ դատաւորն էր, որ դէմ էր քուէարկել՝ իր անհամաձայնութիւնը յայտնելով ՄԴ որոշման վերաբերեալ՝ համարելով ընտրութիւնները կեղծուած .- Lragir.am

### ԻՐԱՆԱՅԱՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԿԵԴՐՈՆԸ

Շարունակում է 8-էն

արահ մտնելէ առաջ հանգստանալու համար: Այս յարկին վրայ կայ նաեւ լայն ընդունելութեան վայր մը՝ գլխաւոր սրահին քով: Երրորդ յարկը ունի միութեան գրադարանը, ընթերցանութեան սրահը, ժողովասրահը, ինչպէս նաեւ միութեան վարչութեան, յանձնախումբերու, երիտասարդներու եւ այլ գրասենեակներ: Այս յարկին վրայ կը գտնուին 9 գրասենեակներ որոնք վարձու պիտի տրուին այլեւայլ գործերու համար: Այս բոլոր յարմարութիւններ ունեցող հոյակապ կեդրոնը ունի նաեւ երկու վերելակներ եւ բացօթեայ պատշգամներ՝ նստելու եւ գրուցելու համար: 2010 թուականի Սեպտեմբեր 10-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս ՆՍՕՏՏ Գարեգին Բ. մեծ շուքով եւ մասնաւոր արարողութիւններով կատարեց օրհնէքի հանդիսաւոր արարողութիւնը՝ ի ներկայութեան բազմաթիւ պետական եւ ազգային ղեկավարներու, հիւրերու, բարերարներու եւ հոծ բազմութեան մը: Իրանահայ Միութիւնը, որ հիմնուած է 1956-ին, ծաւալած է լայն գործունէութիւն մեծագոյն Լոս Անճելըսի մէջ զարկ տալով ազգային գոյատեւման եւ մշակութային լայն ու պատկառելի գործունէութեան 55 տարիներէ ի վեր: Աւելի քան 1000 անդամ եւ բազմաթիւ հետեւորդներ ունեցող այս միութիւնը, որ երկար ժամանակէ ի վեր կը գտնուէր Կլենտէյլի Պրենտ պողոտային վրայ,

այս նորակառուց կեդրոնով աւելի պիտի ընդլայնէ իր գործունէութիւնը՝ մասնաւորաբար նոր սերունդին տալով հայկական եւ ազգային ոգի, նոյն ժամանակ լաւ Ամերիկեան քաղաքացիներ պատրաստելով: Միութիւնը ունի լայնածաւալ աշխատանքային դաշտ - Շաբաթօրեայ հայկական դպրոց, պարախումբ, երգչախումբ, մարզական խումբեր պատքեթպոլի եւ այլ մարզախաղերու, ինչպէս նաեւ տիկնանց, երիտասարդական, մշակութային, գրադարանի, ընկերացի եւ այլ յանձնախումբեր՝ կազմակերպելով բազմազան ձեռնարկներ, գաղութը աշխոյժ, կենսունակ եւ հայկական պահելու ծրագիրով: Բարեսիրական այլ գործունէութիւններու կողքին, Միութիւնը "Հայաստանի մէջ Փրկէ Երեխայ Մը" գործունէութեամբ աւելի քան 600 պատանիներու կը նպաստէ եւ օգտակար կը հանդիսանայ: Իսկ իր կրթական ֆոնտով՝ բազմաթիւ կրթաթոշակներ կը յատկացնէ երիտասարդներու որպէսզի շարունակեն իրենց բարձրագոյն ուսումնառութիւնը: Միութիւնը իր այս նոր կեդրոնէն պիտի շարունակէ աւելի լայնածաւալ եւ ազգաշէն գործունէութիւն: Հանդիսութեան կազմակերպիչ Յանձնախումբը տքնաջան աշխատանքի լծուած է նոր կեդրոնի բացման հանդիսութիւնը յաջողութեամբ պատկերելու համար: Յաւելեալ տեղեկութիւններու եւ տոմսերու համար հեռաձայնել կեդրոնի քարտուղարուհի Քարոլինին (818) 241-1073

### ԱԶԱՏ ԵՒ ԱՆԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ՝ ՔՍԱՆ ՏԱՐԵԿԱՆ

Շարունակում է 13-էն

Նոյն վարժարանի շրջանաւարտ դասարանի աշակերտուհի Տիլայլա Շահպազեան եւ ՀԲԼՄ-ՀԵԼ-ի Փաստտիրնայի սկառտներէն Յովիկ Պապեան պիտի կիսեն այս ամառ Հայաստան կատարած իրենց այցելութիւնէն տպաւորութիւններ: Հանդիսութեան ներկայ պիտի գտնուի նաեւ ՀԲԼՄ-ՀԵԼ-ի գոյգ մասնաձեւերու սկառտներէն կազմուած ներկայացուցչական խումբ մը:

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցու Արեւմտեան թեմի Ա-

ռաջնորդ՝ Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեան եւ Լոս Անճելըսի մօտ Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոս՝ Տիար Գրիգոր Յովհաննիսեան իրենց ներկայութեամբ ու խօսքով առաւել էւս պիտի կարեւորեն Հայաստանի անկախութեան քառամեակին նուիրուած այս երեկոն:

Սիրով հրաւիրուած է լրսանձեւը սահայութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՄԱՐՄԻՆ

## ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

### PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինգսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Մանրամասների համար հեռաձայնել՝ (818) 246-0125

Վարձման գներն են՝	
Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

## ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ

1060 North Allen Ave Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով

Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝ (626) 398-0506

## Burbank Airport

### Bid Request General Contractors

Qualified "B" licensed General Building Contractors are invited to submit a sealed bid on Project E11-14, Module 12.11 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority by 2:05 PM, October 6, 2011. The Work includes, but is not limited to, the following: Installation of new doors, new windows, air conditioning, insulation and correction of some code deficiencies for: Thirty (31) Single Family Residences. Bidders may obtain construction documents from the Bob Hope Airport's Web Site at bobhopeairport.com under Business Opportunities and are encouraged to do so prior to the mandatory pre-bid conference. All Bidders shall register with the Airport Engineering Department via web site or in person at the Home Sound Office. Bids submitted by firms who have not registered with Airport via website or in person will be considered non-responsive. A mandatory Pre-bid conference has been scheduled for September 15, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport's Home Sound Office, 4540 W. Chermak Ave, Burbank, California.

### INVITATION FOR BIDS (IFB) NO. 1712 ENVIRONMENTAL ABATEMENT SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles (HACLA) invites vendors to submit bids for Environmental Abatement Services. Copies of the IFB may be downloaded from the internet at [www.hacla.org](http://www.hacla.org) under "Doing Business with HACLA", then click on "Procurement Opportunities" and click "Construction Goods and Services". Bids will be accepted at 2600 Wilshire Blvd, #3100, Los Angeles, CA 90057 until 10:00 a.m. (local time), September 16, 2011.

9/1, 9/8/11 CNS-2160339# MASSIS WEEKLY



### ԹՈՒՐԵՐՈՐ ՎԱՆԻ ԲԵՐՂԻ ՇՐՋԱԿԱՅՔՈՒՄ

Շարունակուած էջ 14-էն

Երբեմնի գեղեցիկ ու հօր եկեղեցին այսօր կուչ է եկել, թաքնուել քրդական տների ու գոմերի մէջ: Եկեղեցու ներսում գտնուում է գանձանակ: Եկեղեցի այցելող ուխտաւորները այնտեղ որոշակի նուիրատուութիւն են անում, որ եկեղեցուն հետեւող քուրդը, որը ինդրեց իրեն չներկայացնել, բարեկարգի եկեղեցին, թոյլ չտայ, որ հարեւան քրդերը եկեղեցին որպէս աղբանոց օգտագործեն: Այժմ եկեղեցին կողպուած է: Փայտեայ դուռը բացուում է միայն այն ժամանակ, երբ եկեղեցին հիւրեր է ունենում: Գանձանակի հարեւանութեամբ կարելի է գտնել մի քանի հաստափոր գրքեր: Յուշամատեններ են, որտեղ հանդիպում են մտահոգութեան, անհանգստութեան ու ցաւի:

Այստեղ իրենց գայրոյթն ու ցաւն են արտայայտել ոչ միայն հայ գբօսաշրջիկները, այլև օտարները:

Պոն անունով գբօսաշրջիկը գրում է, որ ցնցուել ու սարսուել է, երբ մտել է եկեղեցի ու կատարեալ լուծութեան մէջ մենակ մնացել աստուածաշնեան պատկերների հետ:

«Այդ պահին ես գիտակցեցի, որ գտնուում եմ հագարամեայ պատմութիւն ունեցող մի տաճարում եւ խոնարհուում եմ մի ժողովրդի առաջ, ում մասին մինչ այս ճամբորդութիւնը ոչինչ չգիտէի»:

Քաղաքի հիւսիսային մասի հարթութեան վրայ բարձրանում է վանի միջնաբերդն իր հուշակաւոր արձանագրութիւններով: Քաղաքի հիւսիսարեւելեան մասում գտնուում են թոփրակ-կալէի բարձունքները: Հենց այստեղ կատարուած բազմաթիւ պեղումներով յայտնաբերուած պատմական անցեալը: Ժամանակին այդ հնութիւնների գերակշռող մասը կամ յափշտակուել է, կամ պահուում է եվրոպական թանգարաններում: Բերդ հասնելու համար անհրաժեշտ է կտրել անցնել գառիթափ բարձունքը: Այստեղ ուխտագնացը հանդիպում է փորուած քառակուսի դահլիճների, որոնք զարդարանքներ չունեն: Բերդի բարձունքի վրայ՝ նորակառուցի մզկիթի հարեւանութեամբ կարելի է գտնել հայկական խաչքարեր: Դրանք թուրքերն օգտագործել են որպէս սալալատակ: Բերդում հեթանոսական եւ Արծրունիների ժամանակաշրջանի որեւէ կառուց չի մնացել. դրանք կործանել է Լենկթեմուրը 1392թ.:

Դեռեւս մէկ ամիս առաջ վանայ բերդի հարեւանութեամբ գտնուող հայկական փոքրիկ մատուռն ու գերեզմանաքարը մեր

այցելութեան ժամանակ արդէն չկային: Հայկական արձանագրութեամբ հանուած գերեզմանաքարի տեղը դեռ թարմ էր, հարեւանութեամբ հսկայական մզկիթ էին կառուցում. հայկական մատուռի տեղում նոյնպէս շինարարութիւն էր: Քիւրդ շինարարը մեզ սպառնչ պատասխան չտուեց, թէ հայկական եկեղեցու փոխարէն ինչ են կառուցում. ամենայն հաւանականութեամբ դա հերթական մզկիթն է:


Վանայ լճի ափից նաւակով ընդամէնը 20 րոպէ ուղեւորութիւն, ու հանդիպում են Վասպուրական աշխարհի գարդին՝ Աղթամար կղզուն եւ Սուրբ Խաչ եկեղեցուն:

Եկեղեցին այսօր կանգուն վիճակում է. թրքական կառավարութիւնն այն մէկ տարի առաջ է վերանորոգել, սակայն հայ ճարտարապետները հաւաստիացնում են, որ տաճարի ներսում կատարուել են բազմաթիւ փոփոխութիւններ եւ ձեւախեղումներ: Ամբողջ Արեւմտեան Հայաստանում Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին Տիգրանակերտի Սուրբ Կիրակոսի հետ այն հագուագիւտներից են, որոնք մզկիթի չեն վերածուել, աղբանոց չեն եւ գործում են որպէս հայկական եկեղեցի:

Տաճարի ներսում հանդիպում են բազմաթիւ որմնանկարների, աստուածաշնեան պատկերների ու խաչի տեսարանների: Մոմ թոյլատրուում է վառել միայն դրսում: Թէպէտ քրիստոնեայ աշխարհը միշտ յայտարարում է, որ եկեղեցու դռները բաց են բոլորի առաջ, իսկ հոգեւորականը միջնորդ է Աստուծոյ եւ մարդու միջեւ, սակայն թուրքերի պարագայում դա խախտուել էր: Եկեղեցու ներսում հոգեւորական չկար, հոգեւորականի փոխարէն տաճար այցելողներին դիմաւորում եւ հսկում է թուրք ոստիկանը:

Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցին գբօսաշրջութեան լաւագոյն վայրերից մէկն է: Մեր այցելութեան ժամանակ եկեղեցի էին այցելել բազմաթիւ գբօսաշրջիկներ Գերմանիայից եւ Գանատայից: Նրանք իհարկէ տեղեակ էին, որ եկեղեցին հայկական է, սակայն անընդհատ շեշտում էին եկեղեցու կանգուն վիճակն ու խաչի ներկայութիւնը՝ չաւելելով, որ թուրքերը փաստօրէն շատ դեմոկրատ եւ զարգացած ժողովուրդ են: Յաւուք, այդ գբօսաշրջիկները Վանի մնացեալ եկեղեցիները չէին այցելել:

Խաչի ներկայութիւնը անդադար չեշտում են նաեւ թուրքերը: Հենց եկեղեցու հարեւանութեամբ գտնուող տաղաւարներում վաճառուում են սարսափելի հայերէնով գրքեր եկեղեցու մասին: Հեղինակները նշում են, որ Սուրբ Խաչը



Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի

քրիստոնէական տաճար է: Ո՞վ է հեղինակը եւ ովքե՞ր են կառուցել այն՝ գրքում ոչ մի խօսք չկայ: Նրանք գրում են, որ թրքական իշխանութիւնների մեծահոգութեամբ եկեղեցին վերանորոգուեց, գմբէթին խաչ տեղադրուեց, այդպիսով դառնալով քրիստոնեայ բազմաթիւ ուխտաւորների, յատկապէս հայերի ամենասիրելի վայրը:

Դրսից եկեղեցու տեսքը հրաշալի է: Զարդանախշերը, քանդակներն ու կամարները ընդգծում են եկեղեցու գեղեցկութիւնն ու երբեմնի փառքը:

Եկեղեցու բակում տեղադրուած են բազմաթիւ հայկական գերեզմանաքարեր, հայկական արձանագրութիւններ ու խաչքարերից պատասխիններ: Դրանց մեծ մասը դարերի պատմութիւն ունի ու վկայում է հայի ներկայութեան մասին:

Վանում է գտնուում նաեւ Ագուաւի կամ Ակրփու քար կոչուող ժայռը, որը, ըստ աւանդութեան, կապուած է Սասունցի Դաւիթ հպոսի հետ: Փոքր Մհերն իր հօր՝ դիւցազուն Դաւիթ անէծքի պատճառով փակուած է ժայռ-քարանձաւի մէջ: Քարանձաւի դռները

բացուած են տարուայ մէջ մէկ անգամ, երկնքից իջնում է մանանայ, որով սնուում են Մհերն ու իր ձին:

Համաձայն ասանդութեան՝ Մհերն իր ձիու հետ այդտեղ պէտք է մնա այնքան ժամանակ, մինչեւ աշխարհում թագաւորեն մարդասիրութիւնը, արդարութիւնը, ազնուութիւնը, խաղաղութիւնն ու դադափարական կեանքը:

Հ. Գ. Վան այցելութեան ճանապարհին հայ ուխտաւորների խումբը այցելեց հայոց բիբլիական Արարատ սարը: Մինչ մօտենալը Արարատի գագաթին ամպեր էին կուտակուած: Որքան մենք մօտենում էինք, այնքան ամպերը հեռանում էին՝ արեւի ճառագայթների մէջ փայլեցնելով Արարատի գագաթը: Ընդամէնը 20 րոպէ անց, երբ մենք արդէն հեռանում էինք, կրկին մութ ամպեր հաւաքուեցին Արարատի գագաթին: Կարծես բնութիւնն էլ զգում էր, թէ ովքեր են այցելուները:

Արեւմտեան Հայաստան ուխտագնացութեան համար շնորհակալութիւն ենք յայտնում «Անի տուր» տուրիստական գործակալութեանը:

**ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ**

Գաղութիս ազգայիններէն Տիար Տիգրան Սարգուհի, գնահատելով Ս.Գ.Հ.Կ. «Կայծ» Երիտասարդական Միութեան գործունէութիւնը երկու հազար (\$2,000) տուար կը նուիրէ յիշեալ կազմակերպութեան բարգաւաճման ֆոնտին: Մեր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնենք յարգելի նուիրատուին:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Եթէ ձեր տրամադրութեան տակ ունիք հայերէն գիրքեր, եւ կը ցանկաք գնուեմք նուիրել Կայծ Երիտասարդական Միութեան գրադարանին՝ հանցեմք կապ պահել մեզի հետ: G.Y.O. 1060 N. ALLEN AVE. PASADENA, CA 91104

**ՔԱՉ ՆԱԶԱՐ**

**ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**

Ամէն Կիրակի երեկոյեան  
 Ժամը 10:00-ից 12:30  
 Կլէմտէյի 380-րդ կայանից





# ARMENIAN INDEPENDENCE DAY

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՕՐՈՒԱԿ



# FESTIVAL

# ՓԱՌԱՍՏԱՆԻ ՕՐ

Կազմակերպութեամբ Organized By

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ  
NOR SEROUNT CULTURAL ASSOCIATION

## SUNDAY SEPTEMBER 18, 2011

## VERDUGO PARK, GLENDALE

1621 Cañada Blvd. Glendale, CA 91208.

Starting at 11:00 am

**Live Music**

**Dancing**

**Art Work Exhibition**

**Kids Games**

**Armenian Food**

ԵՐԳ ՈՒ ՊԱՐ

ԱՐՈՒԵՍՏԻ ԳՈՐԾԵՐ

ՓՈԲՐԵՐՈՒ ԽԱՂԵՐ

ՀԱՄԱԴԱՄ ՃԱՇԵՐ



To reserve your booth  
please call Nor Serount Cultural Association  
Ձեր կրպակները ապահովելու համար  
Հեռաձայնեցե՛ք Նոր Սերունդ Մշակութային Միության  
**(818) 391-7938**

### Sponsors



[www.massispost.com](http://www.massispost.com)